2023, ՕԳՈՍՏՈՍ Ա, ԹԻՎ 15 (635)

Էջմիածնի Հայրապետական

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Օգոստոսի 4-ին **ՀՀ-ում ԵՄ դեսպան Անդրեա Վիկտորինին**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում դիվանագիտական առաքելությունն ավարտող Եվրոպական միության պատվիրակության ղեկավար, ԵՄ դեսպան Անդրեա Վիկտորինին:

Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը բերեց դեսպանին՝ հայ ժողովրդին մատուցած ծառայության ու Եվրամիության՝ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ կարգավորմանն ուղղված ջանքերի համար: Նորին Սրբությունը, անդրադառնալով Ադրբեջանի ռազմատենչ կեցվածքին, ծավալապաշտական նկրտումներին, ինչպես նաեւ վերջինիս՝ ՄԱԿ-ի Միջազգային արդարադատության դատարանի՝ Բերձորի միջանցքի արգելափակումը վերացնելու որոշման անտեսմանն ու Կարմիր խաչի մարդասիրական առաքելության իրագործման խոչընդոտմանը, կարեւոր նկատեց ԵՄ եւ միջազգային կառույցների առավել խիստ միջոցների գործադրումը՝ զսպելու Ադրբեջանի նմանօրինակ դատապարտելի գործողությունները: Ըստ Վեհափառ Հայրապետի՝ այս իրողությունը ցույց է տալիս, որ Արցախի ժողովուրդը չի կարող ապրել Ադրբեջանի կազմում, եւ պետք է հարգվի արցախահայության ազատ եւ անկախ ապրելու իրավունքը:

Նորին Սրբությունը ողջունեց նաեւ Եվրոպական միության՝ Հայաստանում տարբեր ոլորտներում իրականացնող ծրագրերը:

Իր հերթին ԵՄ պատվիրակության ղեկավար Անդրեա Վիկտորինը Հայոց Հայրապետին ներկայացրեց Հայաստանում ծավալած իր գործունեությունը՝ մասնավորապես անդրադառնալով անվտանգային, մարդասիրական, հասարակական եւ կրթական ոլորտներում պատվիրակության գործադրած ջանքերին:

Զրույցի ընթացքում կողմերն անդրադարձան Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման կարեւորությանը, քննարկեցին Արցախում ստեղծված հումանիտար աղետի, Հայաստանում եւ Արցախում առկա անվտանգային խնդիրների հաղթահարման ուղիները:

ԱՄՆ հայոց արեւելյան թեմի ուխտավորներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ հայոց արեւելյան թեմի ուխտավորներին՝ ուղեկցությամբ Ֆիլադելֆիայի Սուրբ Երրորդություն եկեղեցու հոգեւոր հովիվ Տ. Հակոբ քհն. Գեւորգյանի:

Տեր Հակոբը, հայցելով Նորին Սրբության օրհնությունը, ներկայացրեց ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանած հայորդիներին:

Վեհափառ Հայրապետը, իր սերն ու օրհնությունը բերելով ուխտավորներին, կարեւորեց աշխարհասփյուռ հայոց թեմերից դեպի Հայաստան եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին նման ուխտագնացությունների կազմակերպումը, ինչը հնարավորություն է ընձեռում հայորդիներին ճանաչելու Մայր հայրենիքը եւ հաղորդ դառնալու հոգեւոր, մշակութային ժառանգությանը:

Հանդիպմանն անդրադառնալով Հայաստանում տիրող իրավիճակին ու Արցախի շրջափակմանը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ԱՄՆ հայոց արեւելյան թեմի ուխտավորներին հորդորեց իրենց երկրում բարձրաձայնել եւ իշխանություններին ներկայացնել տարածաշրջանում առկա կացությունն ու հետեւողական ջանքեր գործադրել արցախահայության անվտանգ կյանքի, ազատ եւ անկախ ապրելու իրավունքի պաշտպանության համար: Վերջում Հայոց Հայրապետը պատասխանեց ուխտավորների հարցերին, որոնք վերաբերում էին Մայր Աթոռի կողմից իրականացվող՝ Հայաստանում եւ Արցախում առկա մարտահրավերների հաղթահարմանն ուղղված ծրագրերին:



Օգոստոսի 6-ին **Արգենտինահայ դպրոցականներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Արգենտինայի հայոց թեմի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» եւ «Դերձակյան» դպրոցների ավարտական դասարանների աշակերտներին:

Նորին Սրբությունը, իր հայրական օրհնությունն ու սերը փոխանցելով Արգենտինայից ժամանած հայորդիներին, գոհունակությամբ արձանագրեց, որ արգենտինահայ գաղութն աչքի է ընկում առանձնահատուկ կազմակերպվածությամբ, հայ կյանքի եւ ազգային արժեքների նախանձախնդիր պահպանմամբ:

Հանդիպմանը Հայոց Հայրապետը նաեւ իր գնահատանքը հայտնեց դպրոցների հոգաբարձուներին, տնօրենությանն ու մանկավարժներին՝ աշակերտներին հայեցի կրթելու եւ դաստիարակելու գործում ներդրած ջանքերի համար:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը հորդորեց ավարտական դասարանների սաներին հայրենիքով խանդավառված ու ոգեւորված լծվել արգենտինահայ համայնքի առավել զորացման գործին, իրենց անսասան հավատքով հաղթահարել ժամանակակից մարտահրավերները եւ պահպանել ազգային գիտակցությունն ու ոգին:

Օգոստոսի 7-ին **Իրանի Իսլամական Հանրապետության նորանշանակ դեսպանին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Մեհդի Սոբհանիին:

Նորին Սրբությունը ողջունեց դեսպանին՝ շնորհավորելով նշանակման կապակցությամբ եւ մաղթելով արդյունաշատ ծառայություն: Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդգծելով, որ նորանշանակ դեսպանի առաքելությունը համընկել է հայ ժողովրդի համար դժվարին ժամանակաշրջանին՝ իր գնահատանքը հայտնեց Իրանի Իսլամական Հանրապետությանը պատերազմի եւ հետպատերազմյան այս ծանր շրջանում Հայաստանին ցուցաբերվող զորակցության համար:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետն անդրադարձավ նաեւ հայ-իրանական դարավոր փոխհարաբերություններին եւ երկու երկրների ներկայիս համագործակցությանը: ➥ էջ 2



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Իրանի Իսլամական Հանրապետության նորանշանակ դեսպանին

↩ էջ 1

Գոհունակություն հայտնելով իրանահայ համայնքի հանդեպ Իրանի իշխանությունների կողմից ցուցաբերվող ուշադրության համար՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը միաժամանակ բարձր գնահատեց հայկական մշակութային արժեքների ու սրբությունների նկատմամբ դրսեւորվող հոգածու վերաբերմունքը:

Զրույցի ընթացքում Նորին Սրբությունն անդրադարձավ Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքներում հայկական հոգեւոր ու մշակութային ժառանգության յուրացման փորձերին եւ ոչնչացման փաստերին, ինչպես նաեւ, իշխանությունների ուղղորդմամբ, կրոնական ու մշակութային արժեքների նկատմամբ դրսեւորվող հանցավոր գործողություններին: Հայոց Հայրապետն այս առնչությամբ դատապարտելի նկատեց նաեւ օրերս Ղուրանի այրման միջադեպը:

Իր հերթին դեսպան Մեհդի Սոբհանին, խոսելով առաջիկա անելիքների մասին, կարեւորեց երկու ժողովուրդների բարեկամական կապերի զարգացման գործում նաեւ միջկրոնական երկխոսությունը: Պարոն Սոբհանին, անդրադառնալով տարածաշրջանային իրավիճակին, ընդգծեց հակամարտությունների խաղաղ կարգավորման անհրաժեշտությունը:

Զրուցակիցներն անդրադարձան նաեւ Մայր Աթոռի եւ Իրանի Իսլամական Հանրապետության միջեւ առկա փոխգործակցային հարաբերություններին՝ կարեւորելով մշակույթի ոլորտում համագործակցությունը, կրոնական երկխոսությունը, միջկրոնական համաժողովների կազմակերպումը:

Կ. Պոլսի «Մարալ» երգի-պարի անսամբլի անդամներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Կ. Պոլսի հայկական «Մարալ» երգի-պարի անսամբլի՝ ուխտավորաբար Հայաստան ժամանած անդամներին:

Հայրապետական իր օրհնությունը բերելով ուխտավորներին՝ Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց պոլսահայերի՝ Մայր Աթոռ այցի առիթով: Հայոց Հայրապետը հաստատեց, որ Կ. Պոլսի հայոց պատրիարքությունը մեծ դերակատարություն է ունեցել ազգային, մշակութային, հոգեւոր ու բարոյական արժեքների պահպանման գործում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նշեց նաեւ, որ մշտապես տեսել է պոլսահայ համայնքի զորավոր հավատքը եւ անվերապահ սերը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի նկատմամբ: Նորին Սրբությունը, վերհիշելով իր հովվապետական այցը Կ. Պոլիս, ուրախությամբ արձանագրեց, որ հակառակ բոլոր տեսակի դժվարություններին ու փորձություններին՝ պոլսահայերն ամուր են պահել իրենց հավատքը, սրբություններն ու ազգային ինքնության գիտակցությունը:

Վերջում Ամենայն Հայոց Հայրապետը բարեմաղթեց պոլսահայ ուխտավորներին, որ Աստծու օրհնության ներքո ապրեն խաղաղ եւ ապահով, պահպանեն հայրենի ժառանգությունն ու առավել շենացնեն պոլսահայ կյանքը:

Օգոստոսի 8-ին

Մաշտոցյան Մատենադարանի տնօրենին եւ փոխտնօրենին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի նորընտիր տնօրեն Արա Խզմալյանին եւ գիտական գծով փոխտնօրեն Վահե Թորոսյանին:

Նորին Սրբությունը, շնորհավորելով Մատենադարանում նոր պաշտոնների ստանձնման առիթով, նրանց մաղթեց արդյունաշատ գործունեություն՝ ի պայծառություն եւ ի փառս Մաշտոցյան Մատենադարանի:

Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ Մատենադարանն ազգային հպարտության ամենանվիրական կենտրոններից է՝ իր ձեռագրական ժառանգությամբ հանդիսանալով համամարդկային գիտական եւ իմացական մտքի զարգացման աղբյուր:

Իր հերթին պարոն Խզմալյանը Նորին Սրբությանը ներկայացրեց Մատենադարանի զարգացմանն ուղղված տեսլականը եւ առաջիկա ծրագրերը՝ կարեւորելով նաեւ Հայ Եկեղեցու աջակցությունը:

Զրույցի ընթացքում քննարկվեցին համագործակցության ուղիները, մեծապես կարեւորվեց ձեռագրագիտական, աղբյուրագիտական եւ թարգմանական առավել բեղուն աշխատանքի իրագործումը: Առաջնահերթ խնդիր համարվեց հայկական ձեռագրերի վերադարձը հայրենիք:

«Մայր Հայաստան» շարժման համակարգողին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Մայր Հայաստան» շարժման համակարգող Անդրանիկ Թեւանյանին:

Հանդիպման ընթացքում անդրադարձ կատարվեց Հայաստանի եւ Արցախի առջեւ ծառացած հիմնախնդիրներին ու անվտանգային մարտահրավերներին, կարեւորվեց դրանց հաղթահարման համար համազգային միասնականության անհրաժեշտությունը: Խոսվեց նաեւ առկա իրավիճակում Հայ Եկեղեցու կողմից ձեռնարկվող քայլերի մասին:

Հանդիպման ավարտին Նորին Սրբությունը մաղթեց Աստծու օգնականությունն ու պահպանությունը մեր հայրենիքին եւ ժողովրդին:

Հայ Եկեղեցու հայաստանաբնակ եռիսկոպոսների հայտարարությունը

Արցախի շարունակվող ամբողջական շրջափակումը, դրա հետեւանքով ստեղծված աղետալի ծայրահեղ իրավիճակը, ինչը ցեղասպանության դասական դրսեւորում է, անելանելիության ծանր զգացումներով են համակել մեր ժողովրդին:

Արցախում սննդամթերքի, դեղորայքի եւ կենսական այլ առաջնահերթ անհրաժեշտությունների խիստ սակավության պայմաններում ամեն օր տեղեկանում ենք մարդկանց, այդ թվում՝ մանուկների, հղիների եւ հիվանդների առողջական վիճակի կտրուկ վատթարացման եւ մահվան ցավալի դեպքերի մասին: Ամբողջական շրջափակմանը զուգահեռ՝ ադրբեջանական իշխանությունները շարունակում են իրականացնել նաեւ ահաբեկչական այնպիսի գործողություններ, որոնք էթնիկական զտումների նպատակով Արցախի ժողովրդի շրջանում միտված են մշտական վախի, հուսահատության, անապահովության զգացումներ եւ հայրենիքը լքելու տրամադրություններ առաջացնելուն: Հակամարդկային նմանօրինակ գործելաոճի հերթական դրսեւորումը տեղի ունեցավ բոլորովին վերջերս, երբ Ադրբեջանի իշխանությունները Բերձորի միջանցքից առեւանգեցին Կարմիր խաչի անմիջական հովանավորության ներքո Արցախից Հայաստան փոխադրվող, առողջական ծանր խնդիրներ ունեցող Վագիֆ Խաչատրյանին՝ կոպտորեն ոտնահարելով Կարմիր խաչի անձեռնմխելիությունը, հեղինակությունն ու մարդասիրական առաքելությունը:

Մեր Ժողովրդի նկատմամբ Ադրբեջանի կողմից իրականացվող թշնամական այսօրինակ գործողությունները ոճրագործություն են ոչ միայն Արցախի հայության նկատմամբ, այլեւ բացահայտ մարտահրավեր՝ ուղղված քաղաքակիրթ ողջ աշխարհին եւ միջազգային իրավասու կազմակերպություններին:

Կոչ ենք ուղղում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին անդամակցող պետությունների առաջնորդներին՝ ազդու միջոցներ գործադրել եւ սթափության կոչել Ադրբեջանի իշխանություններին՝ հարգելու եւ կյանքի կոչելու Միջազգային արդարադատության դատարանի սույն թվականի փետրվարի 22-ի միջանկյալ եւ հուլիսի 6-ի եզրափակիչ որոշումները՝ պարտադրելով հրաժարվել բիրտ ուժի եւ ցեղասպան գործողությունների միջոցով խնդիրները կարգավորելու գործելաոճից:

Տարածաշրջանում խաղաղություն չի կարող հաստատվել ի հաշիվ Արցախի ժողովրդի բնաջնջման կամ նրա խաղաղ, անվտանգ ու արժանապատիվ կյանքի հիմնարար իրավունքների ոտնահարման:

Խորապես մտահոգված Արցախը Ադրբեջանի կազմում ճանաչելու Հայաստանի իշխանությունների որդեգրած դիրքորոշումով՝ կոչ ենք անում գործող իշխանություններին չհրաժարվել Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի պաշտպանության համար Հայաստանի Հանրապետության ստանձնած հանձնառություններից եւ համախմբել պետական ու ազգային ողջ հնարավորություններն ու ներուժը՝ ի պաշտպանություն Արցախի ժողովրդի ապահով, անվտանգ, ինքնիշխան կյանքի:

Արցախը եւ արցախահայությունը կյանք ու ապագա չունեն ցեղասպանությունը պետական քաղաքականություն հռչակած Ադրբեջանի կազմում:

Հորդոր ենք ուղղում մեր Սուրբ Եկեղեցու աշխարհասփյուռ հոգեւոր ողջ դասին, որ ազգային-եկեղեցական կառույցների իրավասու ներկայացուցիչների հետ ձեռնամուխ լինեն իրենց երկրների պետական, եկեղեցական, դիվանագիտական, հասարակական եւ լրատվական շրջանակում ներկայացնելու ադրբեջանական շարունակվող ագրեսիայի հետեւանքով Արցախում ստեղծված ծայրահեղ ծանր կացությունը՝ հասնելու համար Արցախի մեր ժողովրդի կենսական իրավունքների իրագործմանը եւ անվտանգ կյանքի ապահովմանը:

Հորդորում ենք մեր ժողովրդի զավակներին՝ հնարավոր բոլոր միջոցներով եւ ճանապարհներով միանալ Արցախի փրկության սրբազան գործին:

Աղոթում ենք Արցախի մեր ժողովրդի համար եւ հայցում Տիրոջ պահպանությունն ու զորակցությունը Արցախի մեր քույրերին ու եղբայրներին՝ ոգով աննկուն մնալու եւ վճռականությամբ ու միաբանությամբ հաղթահարելու ստեղծված ծանր իրավիճակը եւ ծառացած հիմնախնդիրները:

Թող երկնավոր Տերը խաղաղ պահի մեր հայրենիքը եւ օրհնի համայն մեր ժողովրդի ջանքերը հանուն Արցախի եւ Հայաստանի բարօրության. ամեն:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

Սուրբ Աստվածածնի վերափոխման տոնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում



Օգոստոսի 13-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց Սուրբ Մարիամ Աստվածածնի վերափոխման տոնը:

Բերկրառատ տոնի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանությունը Սուրբ Գայանե վանքում մասնակցեց պատարագի սրբազան արարողությանը: Պատարագիչն էր Մայր Աթոռի Եկեղեցական հայեցակարգային բաժնի տնօրեն Տ. Վազգեն արք. Միրզախանյանը: Ներկայացնելով տոնի խորհուրդը՝ պատարագիչ սրբազանը մասնավորապես ընդգծեց. «Աստվածամոր վերափոխումը տոնում ենք իբրեւ գալիք այն իրողության եւս մեկ հաստատում, որ մենք էլ պիտի հարություն առնենք եւ Աստվածամոր օրինակով հաղթահարենք մահը»:

Վերջում Վազգեն սրբազանը, եւս մեկ անգամ աղոթք վերառաքելով առ Աստված, դիմեց ներկա հավատացյալներին՝ նշելով. «Սիրելի՛ հավատացյալներ, շնորհավորելով բոլորիս տոնի առիթով՝ միանում եմ ամենքիդ աղոթքներին եւ խնդրում Աստվածամոր բարեխոսությունը մեր ազգի, Հայաստան եւ Արցախ աշխարհների համար, մեր բանակի, մեր ժողովրդի փրկության համար»: Սուրբ պատարագի ավարտից հետո եկեղեցական թափորը Սուրբ Գայանե վանքից ուղղվեց դեպի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Սուրբ Տրդատի բաց խորան, որտեղ հանդիսապետությամբ Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Մուշեղ եպս. Բաբայանի՝ կատարվեց Խաղողօրհնեքի հանդիսավոր կարգը: Օրհնված խաղողի ողկույզները բաժանվեցին հավատավոր ժողովրդին:

Տոն Սուրբ Աստվածածնի վերափոխման

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբում է Սուրբ Աստվածածնին նվիրված մեծագույն՝ Վերափոխման տոնը, որը սահմանել է մեր հավատքի հայր Ս. Գրիգոր Լուսավորիչը: Համաձայն Հայոց Եկեղեցու սրբազան ավանդության՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչելությունից, հրաշափառ հարությունից տասնչորս տարի անց Իր հոգին է ավանդում Սուրբ Աստվածամայրը՝ շրջապատված Տիրոջ աշակերտներով: Առաքյալները Տիրամոր մարմինն ամփոփում են Գեթսեմանիի պարտեզում՝ պատանքված մարմնի վրա դնելով բրաբիոնե պսակը՝ սաղմոսներ եւ օրհնություններ երգելով: Եվ այն երեք օրերին, երբ Սուրբ Աստվածամոր մարմինը գտնվում էր կնքված գերեզմանում, անդադար լսվում էին հրեշտակների՝ փառաբանության քաղցրաձայն երգերը: Երեք օր հետո՝ առավոտյան, անմարմինների բանակն իջնում է Տիրամոր գերեզմանի վրա, ապա մեր Փրկիչը՝ Հիսուս Քրիստոս, լուսափայլ ամպով եւ հրեշտակների ուղեկցությամբ մոտենում է Կույս Մարիամի գերեզմանին եւ առանց խախտելու կնիքը՝ աստվածընկալ մարմինը միավորում է հոգուն եւ վերանում երկինք: Եվ հրեշտակների ինը դասերում հերթով կայանելով՝ հարություն առած Աստվածամայրը հանգրվանում է Տիրոջ աջ կողմում՝ երկնային խորանի վարագույրի հետեւում: Սակայն նրա հուղարկավորությանը չի մասնակցում առաքյալներից Ս. Բարդուղիմեոսը: Երբ վերջինս վերադառնում է, ցանկանում է գնալ գերեզման, երկրպագել եւ խնկել Սուրբ Աստվածածնի հիշատակը: Առաքյալները գնում են եւ տեսնում թափուր գերեզմանը, քանզի Սուրբ Տիրամայրը վերափոխվել էր: Հենց այս սրբազան ավանդության հիմամբ մենք հիշատակում ենք Տիրամոր վերափոխման տոնը: Արդարեւ, Հայոց Եկեղեցում, նրա սրբազան ավանդության, հոգեւոր եւ աստվածաբանական մատենագրության մեջ չկա առավել փառաբանված, մեծարված, առավել օրհներգված սուրբ, քան Սուրբ Աստվածածինն է:

Քաջ գիտենք, թե ինչու Աստված, որպես Փրկչի մոր, ընտրեց հենց Սուրբ Կույս Մարիամին, գիտենք նրա կյանքի՝ ծննդյան, Տաճարին ընծայման, Աստծուն անմնացորդ նվիրվելու աստվածաշնչյան վկայությունը: Սուրբ Կույս Մարիամը համեստ, հնազանդ, սրբակենցաղ եւ խոնարհ էր, ուստի Աստված, ընտրելով նրան, ուղարկեց Գաբրիել հրեշտակապետին՝ նրան ավետելու. «Ահա կույսը պիտի հղիանա եւ մի որդի պիտի ծնի, եւ նրան պիտի կոչեն Էմմանուէլ, որ նշանակում է Աստված մեզ հետ» (Մատթ. Ա 23):

Եթե առաջին կնոջով՝ նախամայր Եվայով, մեղքն ու դատապարտությունը մտան մարդկային կյանք, ապա

Աստվածամոր կերպարով (երկրորդ Եվա) ուղենշվեց մարդկության փրկության ճանապարհը: Սուրբ Աստվածամայրը դարձավ ոսկե տապանակ, ինչպես շարականագիրն է վկայում, որից եւ հայտնվեց համայն մարդկության ճշմարիտ Լույսը՝ մեր Տեր Հիսուս Քրիստոս՝ իբրեւ փրկություն, ճանապարհ եւ հավիտենական կյանքը հավատքով ժառանգելու ճշմարիտ դուռ:

Դեռատի օրիորդ Մարիամը հնազանդվում է Տիրոջ կամքին, եւ երբ ժամանակը գալիս է, դառնում է Աստվածամայր՝ լույս աշխարհ բերելով մարդկության Փրկչին, կրում է բոլոր դժվարությունները եւ յոթ վերքերը չսպիացած՝ ապրում մեր փրկության համար՝ իր Զավակի փրկչական առաքելության գիտակցումով:

Հիշենք աստվածաշնչյան այն հատվածները, թե ինչ դառնությամբ է լցվում Աստվածամոր հոգին, երբ կորցնում է տասներկուամյա զավակին, մինչեւ որ գտնում է Նրան Տաճարում, մայրական ինչպիսի անասելի տառապանքով, բայց միաժամանակ խոնարհությամբ է Աստվածամայրը հետեւում Տիրոջ խաչելությանը՝ ընկալելով Նրա զոհողության, խաչի, փրկության եւ սիրո Ավետիսը:

Ուշագրավ է նաեւ Քրիստոսի եւ Տիրամոր հարաբերությունը: Երբ մի անգամ միասին ներկա էին հարսանեկան արարողության Գալիլիայի Կանա քաղաքում, խնջույքի ընթացքում գինին վերջանում է (հմմտ. Հովհ. Բ 1–11): Աստվածածինը նայում է իր Որդուն. Քրիստոս դեռեւս չէր սկսել հրաշագործությունները, չէր ավետել աշխարհին, որ Ինքն է Աստծու Որդին, սակայն Աստվածամայրը գիտեր այդ մասին, քանզի ինքն էր Գաբրիել հրեշտակապետից ավետումն ստացել: Տիրամայրը, նայելով իր Որդուն, խնդրում է Նրան օգնել այդ մարդկանց: Քրիստոս նրան պատասխանում է. «Ի՞նչ ես ուզում ինձնից, ո՛վ կին, իմ ժամանակը դեռ չի հասել» (Հովհ. Բ 4): Քրիստոս կարծես անդրադառնում է այն իրողությանը, որ այդ կինն Իր մայրն է, եւ նա լինելու է ողջ մարդկության մայրը. անմիջապես պատվիրում է տակառները ջուր լցնել եւ այդ ջուրը փոխարկում է գինու:

Սուրբ Տիրամոր վերափոխումը Փրկչի հրաշափառ հարությունից հետո մահկանացուի վերափոխման առաջին դեպքն էր: Աստվածամայրը մահվանից հետո երրորդ օրը հարություն է առնում, պատանքները թողնում է գերեզմանում եւ հրեշտակների ինը դասերում կայանելով՝ բարձրանում երկինք: Դրա համար Հայ Եկեղեցին Վերափոխման տոնը նշում է ինն օր շարունակ:

Վերափոխումը նախ սրբության հաղթանակի տոն է, քանզի Աստվածածինը մանուկ հասակից իրեն նվիրաբերեց Աստծուն, ապրեց սրբակենցաղությամբ եւ աստվածավանդ պատվիրաններին հետեւելով: Ընդհանրական Եկեղեցու հայրերը Տիրամորը համեմատում են տապանակի հետ. տապանակ, որ Հին Իսրայելի, Հին Ուխտի ժողովրդի կյանքում խորհրդանշում էր Աստծու ներկայությունը, որտեղ պահպանվում էին տասնաբանյա պատվիրանները, որոնք Արարչի եւ արարված մարդու միջեւ կապի խորհրդանիշն էին: Սուրբ Աստվածամայրն այն կենդանի տապանակն էր, որ կրում էր մարդեղացյալ Բանին՝ Աստծու Միածին Որդուն, Որը դառնում է մեղանչական մարդկությանը երկնային Հորը մոտեցնող իրական կամուրջ, վերացնում է բոլոր անջրպետները, խոչընդոտները, որոնք մարդուն հեռացնում էին Աստծուց:

Մեզ՝ հայերիս համար Վերափոխման տոնը մեկ այլ նշանակություն եւս ունի. Ս. Բարդուղիմեոս առաքյալը, Սուրբ Աստվածամոր անձեռակերտ պատկերը բերելով Հայաստան, մեծամեծ հրաշքներ է գործում մեր աշխարհում: Որքան մեծ է ամենագութ Աստծու սերը մեր ժողովրդի հանդեպ, որ Ս. Թադեոս առաքյալի միջոցով էլ տիրամուխ Գեղարդն է Հայոց աշխարհ բերվում:

Հայոց Եկեղեցու դարավոր ավանդույթի համաձայն՝ Վերափոխման տոնին բոլոր եկեղեցիներում կատարվում է մեր երկրի առաջին հասունացող պտղի՝ խաղողի օրհնությունը, որպեսզի խաղողի հյութով պատրաստված գինով մեր Տերն իջնի Սուրբ Հաղորդության խորհրդի մեջ եւ սրբագործելով՝ առատորեն բաշխվի քրիստոնյաներիս՝ որպես կատարյալ փրկություն: Օրհնելով խաղողը՝ օրհնվում է նաեւ Հայոց հողը, որ այն բերրի լինի, ապահով լինեն մեր հայրենիքի սահմանները, մեր կյանքը, որ քրիստոնեական գիտակցությամբ «հանդիպեն ողորմությունն ու ճշմարտությունը, համբուրվեն արդարությունն ու խաղաղությունը», ինչպես Դավիթ մարգարեն է ասում իր սաղմոսում (Սաղմ. ՁԴ 11): Օրհնելու նպատակով ընտրվել է խաղողը՝ որպես տարվա բերքի խորհրդանիշ, քանզի մեր Տեր Հիսուս Քրիստոս խաղողի որթը պատվեց՝ հայտնելով. «Ես եմ ճշմարիտ որթատունկը» (Հովհ. ԺԵ 1): Այդ որթատունկի պտղի՝ խաղողի հյութն էր, որ Հիսուս օրհնեց «որպես Նոր Ուխտի» Իր արյուն (հմմտ. Մատթ. ԻՁ 28), որով ամենքս գնվեցինք ու ազատագրվեցինք մեղքի ծառայությունից ու մահից եւ նոր կյանք ունեցանք: Փորձենք այս մեծախորհուրդ տոնը պարզ գիտելիքի եւ հիշատակության սահմանից իրական վերափոխման տոնի վերածել՝ աղոթելով, որ Սուրբ Աստվածածինը դառնա մեր բարեխոս Մայրը, որ նրա միջնորդության եւ բարեխոսության արդյունքում մեր Տերն ու Փրկիչը թագավորի մեր կյանքում, եւ այն դառնա Տիրոջ փառաբանության ճշմարիտ ընթացք:

Սուրբ Աստվածամոր մշտամրմունջ բարեխոսությամբ թող Տերն ամենքիս պարգեւի շնորհք, սեր եւ խաղաղություն:

Ալբերտ սրկ. ՍԱՀԱԿՅԱՆ

Շարական Սուրբ Աստուածածնի վերափոխման

Արեւելք գերարփին
եւ օթարան լուսածին,
Զանմայր ծնեալն առաջին
Ծնար անհայր յերկրորդին.
Բարեխօսեա՛ Միածնին,
Աստուածածին Մայր Բանին:

Բանին Հօր մարմնարան
եւ առագաստ
բնակութեան.
Որ կաթամբ կուսական
Կերակրեցեր զէակն Բան.
Բարեխօսեա՛ Միածնին,
Աստուածածին Մայր Բանին:

Գերագոյն սրբութեամբ
եւ կուսական
մաքրութեամբ,
Բարձեր զանհասն
բնութեամբ
Ի գիրկս քո սննդեամբ.
Բարեխօսեա՛ Միածնին,
Աստուածածին Մայր Բանին:

Դու ծաղիկ անթառամ
Տոհմի սեռիս
մարդկութեան,
Եւ շառաւիղ օրհնութեան
Նախնւոյ ծնողին մեր
բնութեան.
Բարեխօսեա՛ Միածնին,
Աստուածածին Մայր Բանին:

ՅԱԿՈԲ ՊԱՏՐԻԱՐՔ ՆԱԼԵԱՆ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՈՒՍԱՆԵԼԻ

Սկիզբը՝ թիւ 9—14

Հաւատքի աստիճաններուն մեկնութիւնը

ԺԱ

Տասնմէկերորդ աստիճանն այս էր. *մեղքերու թողութեան.* այս մէկը մեր Սուրբ առաքեալը՝ Թադէոսն ըսաւ:

Ասիկա մեզի կը սովրեցնէ, թէ ինչպէս Աստուծոյ կը հաւատանք ամենակարող, որ ոչինչէն ամէն ինչ գոյութեան բերաւ՝ ստեղծելով, այդպէս ալ կրնայ մեղքերուն թողութիւն տալ, որովհետեւ ո՛չ ոք կրնայ մեղքերը ներել՝ բացի Աստուծմէ:

Աստուած այս կարողութիւնը Եկեղեցւոյ ու քահանաներուն յանձնած է. քահանան, Աստուծոյ դեսպանն ըլլալով, խոստովանող մեղաւորին մեղքերը կը ներէ:

Հաւատքի այս աստիճանը մեղաւորներուն համար յոյս է, որպէսզի առանց զղջալու չմեռնին՝ ըսելով, թէ գործուած մեղքերուն համար թողութիւն չըլլար: Այսպէս ըսողը յայտնապէս հերետիկոս է, որովհետեւ հաւատքի այս մասնիկը կ'ուրանայ, որ է մեղքերուն թողութիւնը:

Սուրբ Թադէոսը փայլուն յակինթ, կապուտակ երկնագոյն.

Մեր մեղքերուն, որ անհուն են, ներումի հաստատուն յոյս կու տայ:

ԺԲ

Տասներկրորդ աստիճանն այս է. *մարմիններու յարութեան եւ յաւիտենական կեանքին.* այս մէկը Մատաթիան ըսաւ:

Ասով կ'ուզէ ըսել, թէ Քրիստոս Աստուած՝ Իր ամենակարողութեամբ, Ադամին այս հողացեալ բնութիւնը պիտի յարուցանէ՝ սուրբերը վարձատրելու համար, իսկ մեղաւորները՝ պատժելու: Քանի որ մինչեւ այն ատեն արդարներն ու մեղաւորները մարմիններու յարութեան կը սպասէին. թէեւ մեղաւորները մարմիններու յարութիւնը չէին ուզեր, քանի որ գիտէին, որ իրենք դատապարտուած են: Արդարեւ, սուրբերուն յաւիտենական կեանք կը տրուի, իսկ մեղաւորներուն դատապարտութիւն, յաւիտենական տանջանք եւ աստուածատեսութենէ զրկուիլ կը տրուի: Քանի որ ինչքա՛ն փառքով ու պատիւով արդարները կը պսակուին, այդքան պատիժով մեղաւորները կը պատժուին՝ հակառակ սուրբերու փառքին, քանի որ սուրբերը յաւիտենական կեանքը՝ Աստուծոյ տեսութիւնը կը ժառանգեն, իսկ մեղաւորները՝ յաւիտենական մահը եւ աստուածատեսութենէն կը զրկուին:

Երկրորդ՝ սուրբերն աչքերով կը խնդան՝ տեսնելով զՔրիստոս Աստուած, իսկ մեղաւորները կու լան եւ կ'արտասուեն՝ սադայէլին գարշելի պատկերը տեսնելով:

Երրորդ՝ սուրբերը երանին կը լսեն, իսկ մեղաւորները միշտ կը լսեն, թէ՝ հեռացէք Ինձմէ, դուք՝ անիծուածներ:

Չորրորդ՝ սուրբերը Սողոմոն Իմաստունէն աւելի իմաստուն կը դառնան, իսկ մեղաւորները յիմար կոյսերուն եւ անասուններուն նման կ'ըլլան:

Հինգերորդ՝ սուրբերն անչարչարելի մարմին կը վայելեն՝ պայծառ, նօսր ու թեթեւ, իսկ մեղաւորներն ասոնց հակառակ՝ չարչարելի մարմին, սեւ ու գարշելի, թանձր եւ ծանր մարմին, որ կապարի ու փամփուշտի նման դժոխք պիտի իջնէ, ինչպէս Դաւիթն ըսաւ, թէ՝ անոնք կապարի նման սաստիկ ջուրերուն մէջ պիտի իջնեն:

Վեցերորդ՝ սուրբերն Աստուծոյ սիրով կը ջերմանան, իսկ մեղաւորները ցուրտէն կը պաղին ու իրենց ակռաները կը կրճտեն:

Եօթներորդ՝ սուրբերն ամբողջ մարմինով ու հոգիով կը փառաւորուին, կը խնդան ու կը զուարճանան հրեշտակներու ընկերակցութեամբ, իսկ մեղաւորները անքուն որդերէն կը տանջուին եւ կը չարչարուին:

Սակայն ինչպէս արքայութեան փառքն անտեսանելի է աչքերուն ու անլսելի ականջներուն եւ միայն հաւատքով կ'ըմբռնուի, այդպէս ալ դժոխքի տանջանքներն անտես ու անլուր են, ու միայն հաւատքով գիտենք, որ յաւիտենական տանջանք ու աստուածտեսութենէ զրկում է:

Մատաթիան ամեթիստ (թանկագին) քար, ծիրանագոյն եւ մեղեսիկ,

Մարմիններու յարութեան քեզի յուշարար, կեանքը ստանալ անմահաբար:

Ութերորդ հարցում. *յոյսի մասին, որ աստուածաբանական երկրորդ առաքինութիւնն է:*

Յոյսն ստոյգ սպասում եւ աներկբայ ակնկալութիւն է հանդերձեալ երանութեան՝ յառաջ եկած Աստուծոյ շնորհքներէն ու բարի գործերէն: Յոյսով է, որ կ'ակնկալենք զԱստուած տեսնել ու վայելել Անոր խոստացած բարիքները: Քանի որ ինչպէս հաւատքն անտեսանելիներուն ճանաչումն ու իմացումն է, այդպէս ալ յոյսը անտեսանելիներուն ըմբռնումն է, քանի որ տեսած բանին վրայ յոյս ու ակնկալութիւն չըլլար: Քանի որ մարդ, եթէ բան մը տեսնէ, ինչո՞ւ այլեւս յուսայ, կ'ըսէ Պօղոս առաքեալը, այլ ինչ որ չենք տեսներ, այդ բաներուն կը յուսանք, համբերութեամբ կ'ակնկալենք, իսկ Սուրբ Հոգին մեր միտքի տկարութեան օգնական կ'ըլլայ եւ մեր միտքին կը հաճեցնէ Աստուծոյ խոստացածները ստուգապէս վայելել, եթէ մենք ալ ջանք ընենք, աշխատինք:

Արդարեւ, յոյսն աներկբայ է կ'ըսուի այն պատճառով, որ յոյսը՝ ինչ բանէ կախուած է փրկութիւնը, կարծես թէ երկինքէն կախուած շղթայ մըն է, որ մեզ երկինք կը բարձրացնէ: Եւ ինչպէս որ շղթայով կապուածը չի կրնար արձակուիլ, այսպէս ալ յոյսով հաստատուածը չի կրնար առաքինութենէն ու բարի գործերէն արձակուիլ: Իսկ հանդերձեալ երանութիւն անոր համար կ'ըսէ, որովհետեւ կատարեալ եւ ուղիղ յոյսն այն է, որ ապագայ երանութեան եւ Աստուծոյ տեսութեան համար կ'ըլլայ: Եւ մենք յոյս ունինք, թէ Քրիստոսի մարդեղութեամբ Աստուծոյ որդիներ եղանք ու Յիսուսի եղբայրներ, իսկ հօր ժառանգութիւնը որդիներուն բաժինն է: Հետեւաբար՝ եթէ մենք այլեւս Աստուծոյ որդիներ ենք ու որդիաբար կ'ապրինք, մեր եղբօր՝ Քրիստոսի հետ ժառանգորդ կը դառնանք արքայութեան, այսինքն՝ հանդերձեալ երանութեան:

Աստուծոյ շնորհներէն յառաջացած անոր համար կ'ըսէ, որովհետեւ յոյսն այնպիսի բաներու վրայ է, որ մեր տկար միտքը չի կրնար տանիլ եւ իմանալ, թէ Աստուած ինչպիսի բարիք պատրաստեր է մեզի. անոր համար կը կարօտինք Աստուծոյ շնորհներուն եւ ողորմութեան, որոնք կը լուսաւորեն ու կը զօրացնեն մեր կամքը՝ աներկբայ ընդունելու Աստուծոյ խոստացած բարիքները:

Դարձեալ՝ հանդերձեալ երանութիւնը մեզի երկու բանէ կը պարգեւուի. առաջինն՝ Աստուծոյ շնորհներէն, եւ երկրորդ՝ մեր բարի գործերէն, քանի որ առանց Աստուծոյ շնորհներուն վայ մեր գործերուն, որովհետեւ այդպիսի գործերը՝ առանց Աստուծոյ շնորհներուն, կարծես թէ մեռելի աչք են, որ չեն տեսներ եւ կամ կը նմանին այն աչքերուն, որոնք առողջ կ'երեւին, բայց չեն տեսներ, ու այսպէս են մեր գործերը՝ առանց Աստուծոյ շնորհներուն: Իսկ բարի արդիւնքներուն այն պատճառով կ'ըսէ, որովհետեւ առանց աշխատանքի ո՛չ մէկ բանուոր յոյս կ'ունենայ օրական առնելու. յանդուգն ու գող է այնպիսի մարդը, որ չդրած բանը կ'ուզէ վերցնել:

Սակայն յոյսին մասին քեզի դիւրին օրինակ մը տամ, որպէսզի միտքդ հանգստանայ: Ըսենք, թէ պարտէզ մը ունիս. կը տեսնես, որ երկինքէն անձրեւ կու գայ պարտէզիդ վրայ: Կ'ուրախանաս, թէ տեսակ-տեսակ պտուղներ եւ ծաղիկներ պիտի բուսնին պարտէզիդ մէջ, սակայն եթէ դուն հունտ ցանած չըլլաս ու տունկ տնկած չըլլաս, երկինքէն եկած անձրեւէն քեզի ի՞նչ շահ կայ: Այսպէս ալ հաւատքով հաւատացիր, թէ արքայութիւն կայ, եւ Աստուած զայն խոստացած է քեզի: Աստուծոյ այս խոստումը յոյս մը եղաւ սիրտիդ մէջ: Աստուած ըսաւ, թէ քեզի այս արքայութիւնը պիտի տամ, եթէ բարեգործ եղար: Իսկ եթէ դուն երբեք հոգ չըրիր սուրբ ու առաքինի ըլլալ, այլ չար ճանապարհներէ գացիր, եթէ յոյս ալ ունենաս, քեզի շահ չկայ, որովհետեւ ուզեցիր, որ ճրագդ առանց իւղի՝ սովորական ջուրով վառես, որ կարելի չէ: Սակայն եթէ Աստուծոյ խոստացածին հաւատացիր ու գործերովդ մաքրուեցար, ահա՛ յուսացածիդ հասար:

Արդ, նախ եւ առաջ մեր յոյսն ու ապաւէնն Աստուած է:

Երկրորդ՝ Տիրամայր Սուրբ Աստուածածինը, քանի որ ա՛ն է Սուրբ Լոյսին մայրը:

Երրորդ՝ հրեշտակներուն բարեխօսութիւնը:

Չորրորդ՝ սուրբ առաքեալները:

Հինգերորդ՝ սուրբ մարտիրոսները:

Վեցերորդ՝ սուրբ կոյսերը:

Եօթներորդ՝ Քրիստոսի սուրբ խոստովանողները եւ արքայութեան բոլոր որդիները:

Աստուծոյ կատարելապէս ա՛ն կը յուսայ, ով իր գործերով սուրբ կ'ըլլայ,

Եւ կը յուսայ անթերի ստանալ Աստուծոյ խոստացածը:

Շարունակելի

Փոխադրութիւնը՝
Վարանդ (Յակոբ) ՔՈՐԹՄՈՍԵԱՆԻ

Դարավոր պայքար

Սկիզբը՝ 2022-ի թիվ 16, 2023-ի թիվ 14

Բռնությամբ ստեղծված սելջուկյան խայտաբղետ տերությունը չէր կարող երկար գոյատեւել եւ արդեն ԺԱ դարավերջին քայքայվում եւ տրոհվում է առանձին ամիրայությունների: Այդպիսիք ստեղծվում են նաեւ Հայաստանում՝ Շադդադյանները՝ Շիրակում, Շահարմենները՝ Խլաթում, Արտուխյանները՝ Աղձնիքում, Դանիշմանները՝ Փոքր Հայքում, ինչպես նաեւ Կարսի, Կարնո ու Երզնկայի ամիրայությունները: Այդ ամիրայություններում եւս հայ բնակչությունը տառապում ու տանջվում էր, ենթարկվում բռնի մահմեդականացման. «Եթե բնակչությունը եւ գերիները չէին ուզում կամովին ընդունել մուսուլմանական հավատը,— ասված է թուրքական աղբյուրներից մեկում,— Դանիշմենդը հրամայել է սպանել նրանց մի մասին, որպեսզի ազդեն մյուսների վրա»:

Թուրքական դաժան լուծն ստիպում է հայ ժողովրդին ազգային-ազատագրական պայքար սկսել: Այդ ժամանակ բավականաչափ ուժեղանում է վրացական պետությունը, որն ազատագրվում է սելջուկյան տիրապետությունից: Ստեղծվում է հայ-վրացական զինակցություն, որն առաջին հաջողություններն է ունենում Դավիթ Շինարար թագավորի օրոք (1089—1125 թթ.): Նա սելջուկներից ազատագրում է Անդրկովկասի մի շարք շրջաններ, այդ թվում՝ Լոռին, ինչը ոգեշնչում է հայ բնակչությանը: Ազատագրական շարժումը նոր թափ է ստանում հատկապես Շիրակում:

Անիի ապստամբ հայերը 1123 թ. դիմում են Դավիթ Շինարարին՝ Աբուլսուար ամիրայի եւ առհասարակ սելջուկների դեմ համատեղ պայքարելու խնդրանքով: Նա օգնության է գալիս զորքով: Սամուել Անեցին այս մասին գրում է. «Անի քաղաքի եւ Շիրակի գավառի տարակույսի մեջ ընկած ու տառապած բնակիչները մտածեցին ելք գտնել փոթորկից, եւ նրանք, ձեռնտու լինելով վրաց Դավիթ թագավորին, նենգեցին.... Աբուլսուարին.... Նրանք, բանալով քաղաքի դռները, թագավորին ներս թողեցին, եւ այդ ժամանակ, երբ սա ներս էր մտնում, եւ ոչ մի մարդ չսպանվեց»:

Դավիթ Շինարարի մահից հետո՝ 1126 թ., Աբուլսուարի որդի Ֆատլունը, հարեւան ամիրայությունների օգնությամբ մեծ ուժեր հավաքագրելով, հարձակվում է Անիի վրա, որի հայ բնակիչները մարտնչում էին հերոսաբար: Նրանց մեջ էին նաեւ կանայք. աննկարագրելի անձնուրացություն եւ խիզախություն է ցուցաբերում Այծեմնիկը, որն անտեսելով նետերից ստացած վերքերը՝ մարտնչում է մինչեւ վերջ եւ զոհվում քաջաբար: Անհավասար մարտերում Շադդադյանները դարձյալ գրավում են Անին եւ Շիրակը, ինչը խիստ ծանրացնում է հայ ժողովրդի վիճակը:

Հայ-վրացական զինակցությունն ամրապնդվում է հատկապես վրաց Թամար թագուհու (1184—1213 թթ.) օրոք, եւ պայքար է ծավալվում նաեւ Հայաստանի ազատագրման համար: Վրացական պետության կյանքում կարեւոր դերակատարում ունեին Զաքարյանների տոհմից Զաքարե եւ Իվանե եղբայրները, որոնցից առաջինը դարձավ հայ-վրացական զինված ուժերի գլխավոր հրամանատար (ամիրսպասալար), իսկ երկրորդը՝ պալատական նախարար (աթաբեկ): Հայ-վրացական միացյալ զորքերն ազատագրում են Գուգարքը (Լոռին), Արցախն ու Սյունիքը, Արարատյան եւ Շիրակի դաշտերը, Անին, Դվինը, Կարսը, Բագրեւանդը եւ մի շարք այլ տարածքներ: Դեպքերին ականատես Կիրակոս Գանձակեցին Զաքարե եւ Իվանե եղբայրների մասին հիշատակում է. «Սրանք քաջությամբ վարեցին շատ պատերազմներ ու հայերի բազմաթիվ երկրներ, որ պարսիկների ու տաճիկների ձեռքին էին, առան նրանցից եւ սեփականացրին, այն է՝ գավառները, որ գտնվում էին Գեղարքունի ծովի շուրջը, Տաշիրը եւ Այրարատը, Բջնի քաղաքը եւ Դվինը, եւ Անբերդը, եւ Անին, եւ Կարսը, եւ Վայոց ձորը, եւ Սյունյաց աշխարհն ու այն բերդերը, քաղաքներն ու գավառները, որ գտնվում էին նրա շուրջը: Նրանք հարկատու դարձրին եւ Կարնո քաղաքի սուլթանին.... Նրանք ընդարձակեցին իրենց սահմանները բոլոր կողմերից»:

Ազատագրվում է գրեթե ողջ Հյուսիսարեւելյան Հայաստանը եւ վրացական թագավորության կազմում ձեռք է բերում որոշակի ինքնուրույնություն. այն կառավարում էին Զաքարյանները: Վերականգնվում են Բագրատունիների ժամանակաշրջանի ֆեոդալական հարաբերությունները, զարգանում են տնտեսությունն ու առեւտուրը, արհեստները, աճում են քաղաքները, ուժեղանում են հարաբերությունները հարեւան երկրների հետ, մասնավորապես սերտ կապեր են հաստատվում Ռուսաստանի եւ Անդրկովկասի միջեւ: Տնտեսական առաջընթացը զուգորդվում էր մշակութային զարգացման հետ:

Հայացք դարի բարձունքից

Սկիզբը՝ թիվ 11–12

Յուրերին ծանոթացրի մայրիկիս՝ առանձնահատուկ նշելով նրա կյանքի ամենամեծ առաքելությունը. յոթ որդի եւ մեկ դուստր է նա լույս աշխարհ բերել: Ասլամազյան քույրերն ինչ ցնծությամբ արձագանքեցին այս «վիճակագրությանը», նույնիսկ ծափ զարկեցին... չէ՞ որ նրանց ընտանիքում էլ է թվերի նույն՝ 7:1 հարաբերակցությունը՝ միայն թե գեղեցկուհիների գերակայությամբ...

Ուշագրավ մի ռեկորդի մասին էլ ասացի՝ մայրս քսան տարեկանում արդեն... երեք որդի ուներ...

– Հեղինե՛ մայրիկ, Դուք իսկական հերոսուհի եք, կեցցե՛ք,– պաթոսով ասաց Մարիամ Ասլամազյանը, եւ ինքն ու մայրս ողջագուրվեցին: Մյուսներն էլ արձագանքեցին ջերմ ու յուրովի:

Վաթսունի շեմին մոտեցող մայրս դեռահաս պարմանուհու պես շիկնեց եւ գովեստներից նեղվելով՝ փութաց վերնահարկ՝ հարսների հետ սեղանը «համովացնելու»:

Մեր երկհարկանի տան կառուցումն իմ՝ արդեն երջանկահիշատակ ուսուցիչ եւ գյուղատնտես հայրը համարյա ավարտին է հասցնում Մեծ հայրենականի նախօրեին եւ... զորակոչվում գործող բանակ: Տան ներքնահարկում՝ դեմ դիմաց, զույգ մառաններն են՝ բարձր կամարով իրար կապված:

Հյուրերիս առաջարկեցի նախապես փոքրիկ շրջայց կատարել մառաններում, մանավանդ որ այնտեղ կարասներից մեկը «քնարերգում» է՝ մաճառը համերգում, անուշ լիրիկա է բուրում՝ վասն խաղողի եւ գինու...

Նախ եղանք ձախակողմյան՝ մրգաբույր մառանում, ուր այն առատ, երանավետ տարիների գյուղական պարզ կենցաղավարության կահ-կարասիք էին՝ փայտյա խմորատաշտը, խնոցին, երկանքը, լավաշի պահարանը, պարենամթերքի (հորած պանիր, խիտ աղաջրի մեջ պահվող Սեւանա կողակ ձուկ...) կճուճներ ու արծնապատ զանազան կավամաններ, ուռենու ճկուն շիվերով գործած կողովներ ու սալաներ՝ սերկեւիլով ու պահուսի խնձորով լեցուն, մատնաչափ փշատով, արեւաշող ու արեւահամ չիր ու չամիչով լի զամբյուղներ...

Միջանցիկ քամուց սկսեցին ճոճվել օճորքից կախված ձմեռնուկ տանձի «ջահերը», ալվան խաղողի կախանները, սուջուխի եւ ալանու դեռեւս թաց, սակայն գայթակղիչ շարերը... Մառանի օդն ամբողջությամբ հագեցած էր ախորժաբեր բուրմունքով...

– Բաբկեն եւ Մարիամ, տեսնում եք, չէ՞, նկարելու ի՞նչ հրաշալի օբյեկտ է,– ապագայի միտումով գոհունակ ակնարկեց Երանուհի Ասլամազյանը:

Հիմա էլ իջանք մյուս՝ գինու-օղու խորունկ մառանը: Այստեղ կիսամութի մեջ պարզորոշ ուրվագծվեցին կաղնեփայտե տակառներն ու կավե հսկա կարասները՝ շարքով, իսկ երբ մթությունն իսպառ ցրեց նեոնային պայծառ լամպը, հնձանում աստղիկների պես շողարձակեցին խաղողի ոսկեհատիկ ողկույզները: Ցեմենտյա ողորկ պատերով հնձանում գրեթե երկու տոննայի չափ Հայաստանի ամենաքաղցր՝ «Ոսկեհատ» («Խարջի») տեսակի ընտրված խաղող էր ամբարված: Ասացի, որ եղբայրներս այսօր կավարտեն բերքահավաքը, իսկ երեկոյան մերկ ոտքերով կճմլեն ողկույզները եւ միլիոնավոր հատիկներից քամված անուշ հյութը՝ շիրան, գուբից դույլ-դույլ կհանեն ու կարասները կլցնեն, որպեսզի օրերի հետ այն խմորվի, մաճառ դառնա, ապա՝ ոսկեվազյան ոսկեշող գինի: Մերկ ոտքերով ողկույզները ճմլելու մասին ասածս, պարզվեց, բոլորի մտապատկերում էլ նույն հիշողությունն է արթնացրել. Ակսել Բակունցի «Միրհավ» նրբահյուս պատմվածքը, քարե տաշտը, Դիլան դային, զառ մանդիլով նորահարս Սոնան... Զարմանալի զուգադիպությամբ հինգ տարի առաջ՝ խաղող ճմլելու, գինի արարելու այսպիսի աստվածահաճո պահի, մեր տուն եկավ «ավագ որսկան» Վախթանգ Անանյանը, եւ որ շատ հետաքրքիր է, նա նույնպես հիշեց իր մտերիմ գրչընկեր Ակսելին, ապա Դիլանին, Սոնային եւ դեռ ավելին՝ «այնքա՜ն տաք էր հնձանը...»: Այո՛, ոսկեգրիչ Ակսել Բակունցը չի կարող չհիշվել. այսօր եւ առմիշտ նա մեր կյանքի հավերժող ուղեկիցն է...

Մոտեցանք մեկ շաբաթ առաջ խաղողահյութով մինչեւ բուկը լցված այն կարասին, որը «գժվել» էր, եւ ներսում անզուսպ երգ ու եռք էր, ուղղակի անկասելիորեն փրփրել էր նորահաս գինին: Այդպես է գինու բանը. եռում-փրփրում է խաղողահյութը՝ քաղցուն, ապա մեկ ամիս անց հանդարտվում, դառնանում, ինքնազտվում, դառնում է թափանցիկ-ոսկեգույն, սակայն արդեն սարսափելի անուն... ալկոհոլի լիցքով...

Իսկ հիմա գինեբույր կարասը միալար երգում է իմաստուն, եւ նրա այդ դուրեկան երգն ինձ ծանոթ ու հարազատ է դեռ իմ մանուկ օրերից...

Մոտ 600 լիտրանոց կարասը մեր մառանի (եւ ոչ միայն մեր...) ամենանշանավորն է, քանզի... «ծննդյան վկայական» ունի... Ես մատնացույց արեցի կարասի վերնամասի այն շրջանը, որտեղ դեռեւս հում, չթրծված կավի վրա, ձեռքի ոսկրե գործիքով, ալիքաձեւ, գեղեցիկ նախշազարդումներ է արել կավագործ վարպետը, ապա փորագրել ծննդյան տարեթիվը՝ 1619 թ., եւ դրել մեսրոպատառ իր ստորագրությունը՝ Դաւիթ:

Հյուրերս ավելի աշխուժացան, այո՛, ուրեմն ստացվում է, որ ուղիղ 359 տարի առաջ վարպետ Դավիթի թրծած այս կարասում խաղողագործների քանի՞-քանի՞ սերունդ գինի է արարել ու ըմբոշխնել...

Մեզ լիրիկական զեղումների տրամադրող մառանում, դարձյալ վասն խաղողի ու գինու, մենք, միմյանց լրացնելով, հիշեցինք «գինեվետ» բանաստեղծներ Խայամին, Վահագն Դավթյանին, Հրաչյա Հովհաննիսյանին եւ էլի ուրիշների:

Ես էլ բարձրաձայնեցի հողաբույր բանաստեղծ Համո Սահյանին, որը 1952-ին վայելել է Ոսկեվազի արեւահամ գինին ու գրել.

Ձեր Ոսկեվազի գինին հնուց
Արար-աշխարհ է հիացնում,
Այդ նրանից է, որ խմելուց
Մի ժամ հետո է արբեցնում...

Դու ինչքան լավ ես քամում գինի,
Ասա գաղտնիքը, թող իմանամ՝
Ինչպե՞ս անեմ, որ երգս լինի
Ձեր Ոսկեվազի գինու նման:

Պապիկ-տատիկիս ժամանակներից մեզ անցած շեկլիկ, կլորիկ, սիրունիկ մի հնօրյա գավով կարասից նորամանուկ մաճառագինի հանեցի, որպեսզի նույն կարասի 359–360-րդ տարեշրջանը բացենք իմ հարգեւոր հյուրերի հետ՝ համադամ ուտեստների անհրաժեշտ ճաշակմամբ: Դե, մեր մեծերն իրենց փորձից գիտեին, որ գինի դարձող մաճառի «գիժ» ժամանակ անուշորեն խմվող հեղուկին պետք չէ շատ վստահել. ասում էին՝ այն

Մարիամ եւ Երանուհի Ասլամազյան քույրերը

կամ խմողի գլուխն է բռնում՝ պտտում, կամ ոտքերն է իջնում՝ թուլացնում... Մի բան էլ ես հյուրերիս նախազգուշացրի՝ այսօր կամ մաճառ, կամ խաղող, բայց ոչ երբեք դրանք միաժամանակ... նույն ստամոքսում: Իմ ասածը հաստատեց իր ավելի հարուստ կենսափորձով Բ. Քոլոզյանը, ապա հարցրեց. «Ժողովո՛ւրդ ջան, ի՞նչ կարծիքի եք, մի-մի թաս հենց էստեղ անուշ չանե՞նք»: Սակայն «դեմոկրատիկ» սկզբունքով նույն «ժողովուրդ ջանը» տեղում մերժեց առաջարկը: Այստեղ ես էլ հավելեցի, որ «մառանախում»-ը հիշեցնում է Մաքսիմ Գորկու հետ պատահածը. Հայաստանի թանկագին հյուր գրողին Երեւանի կոնյակի, գինու-օղու «Արարատ» տրեստի մառաններում շրջայցի են տանում, համտեսում է հայկական համբավավոր խմիչքները եւ... Հետո նա այդ օրը շատ դիպուկ, թեւավոր դարձած խոսքով է հիշում.

«Երեւի թե ավելի հեշտ լիներ Արարատ լեռան գագաթը բարձրանալ, քան ելնել... «Արարատ»-ի մառաններից...»:

Շարունակելի

Սերժ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Սույն ժամանակաշրջանում ձեւավորվում եւ զարթոնք է ապրում նաեւ Կիլիկիայի հայկական պետությունը: Հայերը Կիլիկիայում բնակություն էին հաստատել դեռեւս հնագույն ժամանակներից, եւ նրանց թիվն աստիճանաբար ստվարացել էր: Արդեն Ե դարում նրանք նկատելի թիվ էին կազմում, եւ ունեին իրենց եկեղեցիներն ու իշխանները: Անգամ Ալեքսանդրեթի (Իսոսի) ծոցը մի ժամանակ կոչվել է Հայոց ծոց: Հայերի հոսքը դեպի Կիլիկիա ուժեղանում է հետագա դարերում՝ արաբա-բյուզանդական պատերազմների, ապա՝ սելջուկ-թուրքերի կործանարար արշավանքների հետեւանքով: Տանջահար հայերը փրկություն էին որոնում նաեւ գաղթելով Կիլիկիա: Խիստ ծանր էր նաեւ բյուզանդական կայսրության՝ հայերին հալածելու եւ ջլատելու քաղաքականությունը, որի հետեւանքով իրենց հայրենի բնակավայրերից դեպի Փոքր Ասիա, Կիլիկիա են գաղթում հազարավոր հայեր: Այսպես՝ միայն Վասիլ Բ կայսրը 1021–1022 թթ. Վասպուրականից բռնագաղթեցնում է մոտ 15000 հայ ընտանիքի:

Այս ամենով հանդերձ՝ աշխատասեր ու շինարար հայերը ոչ միայն պահպանում էին ազգային նկարագիրը, այլ նաեւ բնակության նոր վայրերում կարգավորում իրենց կյանքը, զարգացնում տնտեսությունն ու մշակույթը: Ավելին՝ նրանք Կիլիկիայում ստեղծում են իրենց իշխանությունն ու պետությունը (թագավորությունը), որը կապված էր բուն Հայաստանի հետ եւ գոյատեւում է մոտ 300 տարի (1080–1375 թթ.): Հաստատվում է ֆեոդալական միապետություն, որն ուներ նավատորմ եւ մասնակցում էր միջազգային առեւտրին: Կիլիկյան տերությունը եւս կործանվում է մահմեդական հորդաների՝ մասնավորապես եգիպտական մամլուքների հարվածներից:

Բուն Հայաստանում տնտեսական եւ մշակութային առաջընթացը խաթարվում է նոր արհավիրքով՝ մոնղոլական արշավանքներով եւ տիրապետությամբ (1236–1344 թթ.), որոնց հետեւանքով ավերվում է երկիրը, կործանվում են ծաղկող քաղաքները, անկում են ապրում տնտեսությունն ու մշակույթը: Մոնղոլական դաժան լծի դեմ կազմակերպվում են հայ-վրացական միացյալ ապստամբություններ, որոնք, սակայն, ավարտվում են պարտությամբ:

Այնուհետեւ գլուխ է բարձրացնում միջինասիական բռնապետ Լենկ Թեմուրը (Թամեռլան), որը սերում էր թուրքացած բառլաս մոնղոլական ցեղից: Նա 1386–1394 թթ. մի քանի անգամ արշավում է Հայաստան, քարուքանդ անում երկիրը, այրում եւ կողոպտում քաղաքներն ու գյուղերը, սարսափելի դաժանությամբ կոտորում բնակչությանը: Լենկ Թեմուրի հրոսակային զորքերը Երեւանում գազանաբար հոշոտում են 500 տղամարդու, Վանում 7000 հոգու տանջամահ են անում՝ մեծ մասին գլորելով քաղաքի բերդի ժայռապատ պարիսպներից, Սեբաստիայում կենդանի թաղում են 3000 հայի. այս մասին ժամանակակիցը վկայել է. «Սույն տարում (1400 թ.) Թամուր բեկը գրավեց Սեւաստ (Սեբաստիա) քաղաքը, որը քանդեց ու ավերեց, սրախողխող արեց բոլորին, գերեվարեց շատ կանանց ու երեխաների եւ 3000 մարդու, որոնք նետ էին արձակել իր վրա, փոս փորելով՝ կենդանի թաղեց»:

Լենկ Թեմուրը 1402 թ. Անգորայի ճակատամարտում պարտության է մատնում թուրք սուլթան Բայազիդ Ա-ին եւ գերի վերցնում նրան: Պատմում են, որ նա, տեսնելով գերեվարված սուլթանին, ծիծաղում է, ինչից նեղսրտած՝ Բայազիդն ասում է. «Սպանի՛ր ինձ, բայց մի՛ ծաղրիր»: Լենկ Թեմուրը պատասխանում է. «Քեզ չեմ ծաղրում. տես՝ ինչ մեծ ու գեղեցիկ է այս աշխարհը, մի՞թե բոլորը համաձայն են, որ այն պատկանի այնպիսի կաղին, ինչպիսին ես եմ, կամ այնպիսի կույրին, ինչպիսին դու ես» (Թեմուրը կաղ էր, այստեղից էլ՝ Լենկ (Կաղ) Թեմուր, իսկ Բայազիդը՝ կույր, ուստի եւ՝ Քոռ Բայազիդ անվանումները):

Լենկ Թեմուրի աշխարհակալությունն ավարտվում է նրա մահով՝ 1305 թ., որից հետո նրա վիթխարի բռնատիրությունը կազմալուծվում է: Այս իրավիճակից օգտվում են թուրքմենական քոչվոր ցեղերը, որոնցից Հայաստանում տիրապետող են դառնում սկզբում կարա-կոյունլու (1411–1467 թթ.), իսկ հետո՝ ակ-կոյունլու (աղ-կոյունլու) ցեղերը (1467–1512 թթ.): Այդպես էին կոչվում, քանի որ նրանց դրոշների վրա պատկերված էին սեւ ու սպիտակ ոչխարներ, խոյեր (կարա՝ սեւ, ակ (աղ)՝ սպիտակ): Սրանք մշտական հակամարտությունների մեջ էին եւ մղում էին պատերազմներ միմյանց դեմ՝ նաեւ Հայաստանում գերիշխող դառնալու համար, որից ամենաշատը տուժում էր հայ ժողովուրդը: Հայ բնակչությունն անգթորեն հարստահարվում եւ կեղեքվում էր, գնդակոծվում ու ոչնչացվում:

Այսպես մեկը մյուսի հետեւից Հայաստանում տիրապետող էին դառնում մահմեդական վայրի ցեղերը եւ ավերում երկիրը, կոտորում հայ ժողովրդին: Հետագայում առավել սարսափելի պետք է լիներին մոլեռանդ օսմանյան թուրքերը, որոնց ճանապարհը վերածվեց համատարած գերեզմանոցի...

Անուշ ԱՂԱՍԱՐՅԱՆ

Հայ Եկեղեցին եւ արեւելահայ դպրոցը ԺԹ դարի երկրորդ կեսին

Սկիզբը՝ 2022-ի թիվ 23, 2023-ի թիվ 2–3, 13–14

Թեմական դպրոցում առաջադիմական գաղափարները վառ պահելու համար հետեւողական գործունեություն է ծավալում Ղազարոս Աղայանը. վերջինիս համբավն ու հեղինակությունն առանձնակի ոգեւորություն են առաջացնում երիտասարդության շրջանում: 1880 թ. մեծ ճանաչում ունեցող Արիստակես վարդապետը վերադառնում է Ս. Էջմիածին: Վերջինիս հեռանալը Շուշիից հիասթափեցնում է խանդավառված երիտասարդությանը, եւ դպրոցի հետագա զարգացումը հետզհետե նահանջում է: 1882 թվականի ամռանը դպրոցից հեռանում է նաեւ Ղ. Աղայանը, իսկ Ս. Մանդինյանը դեռեւս 1881 թ. նշանակվել էր Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ: Այս ամենի արդյունքում Շուշիի թեմական դպրոցի պատմության մեջ սկսվում է նահանջի եւ անկման տասնամյա շրջան:

Այսպիսով՝ թեմական դպրոցները, չնայած որոշակի սահմանափակումներին եւ դժվարություններին, իրենց ձեռքում էին կենտրոնացրել ժամանակի բարձրագույն կրթության գլխավոր դերակատարությունը:

Գ. Հոգեւոր կամ վիճակային դպրոցներ

Հայկական կրթական համակարգում ուրույն տեղ են ունեցել հոգեւոր կամ վիճակային դպրոցները: Ակնհայտ է, որ «Պոլոժենիեն» այս կարգի դպրոցների վերաբերյալ սահմանում էր որոշակի կանոններ, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ ԺԹ դարի երկրորդ կեսին նմանօրինակ դպրոցներին եւս մեծ նշանակություն էր տրվում: Հոգեւոր կամ վիճակային եւ ծխական դպրոցների միջեւ զգալի տարբերություն չէր նկատվում. վիճակային կրթօջախները կարծես ծխական դպրոցների շարունակությունն էին (տես *Վ. Երկանյան,* Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում, Երեւան, 1970, էջ 46): Վիճակային դպրոցները հիմնադրվում են 1830-ական թվականներից սկսյալ, երբ հայկական կրթական համակարգը, Ամենայն Հայոց Կաթողիկոսի ջանքերի շնորհիվ, օգտվում էր որոշակի ինքնուրույնությունից: Շամախիի թեմական հոգեւոր, Ագուլիսի (Վերին) հոգեւոր միջնակարգ եւ Երնջակի Ս. Կարապետ վանքի (Ապրակունիս գյուղի) հոգեւոր ծխական դպրոցների պատմությունն ուսումնասիրելիս պարզում ենք, որ այս դպրոցները հիմնադրվել են ԺԹ դարի 30-ականներից հետո՝ 1844 (1843 թ.), 1849, 1860 թվականներին (տես *Ս. Խուդոյան,* Արեւելահայ դպրոցները 1830–1920 թվականներին, Երեւան, 1987, էջ 196, 204, 457): Իսկ Շ. Հարությունյանը գրում է, որ կայսրության հայաշատ տարբեր քաղաքներում ԺԹ դարի 30-ական թվականներից սկսյալ բացվել եւ փոփոխական հաջողությամբ գործել են նաեւ հայկական հոգեւոր կամ վիճակային դպրոցներ (Ալեքսանդրապոլ, Ղզլար, Մոզդոկ, Բաքու, Եկատերինոդար եւ այլն. տես *Շ. Հարությունյան,* Հայ ժողովրդի պատմության համառոտ ժամանակագրություն 1801–1917, Երեւան, 1955, էջ 73): 1836 թ. «Պոլոժենիեն» հաստատում էր հոգեւոր դպրոցների գոյությունը, իսկ Հայ-լուսավորչական հոգեւոր դպրոցական հաստատությունների կանոնադրության բաժնում ասվում էր. «Հայ պատանիների աստուածաբանական գիտութիւնների մէջ կրթելու համար Էջմիածնի վանքում հոգեւոր ճեմարան եւ ամէն թեմում մի հոգեւոր դպրանոց (սեմինարիա)» (*Ներսէս վրդ. Մելիք-Թանգեան,* Հայոց եկեղեցական իրաւունքը, Ս. Էջմիածին, 2011, էջ 558):



Ինչպես տեսնում ենք, 1836 թ. «Պոլոժենիեն» առանձին կանոններով սահմանել էր Հայ-լուսավորչական Եկեղեցու հոգեւոր դպրոցների իրավունքները: Հոգեւոր կամ վիճակային դպրոցներում ուսման ողջ ընթացքը 6–8 տարի էր: ԺԹ դարի երկրորդ կեսին հայկական կրթական համակարգի զարգացման գործում առանձնակի տեղ ուներ Ալեքսանդրապոլը, որը, այլ գավառների համեմատությամբ, կարճ ժամանակահատվածում կազմակերպել էր իր հասարակական-քաղաքական կյանքը: Ալեքսանդրապոլում գործող հայտնի կրթօջախներից էր Ս. Փրկիչ եկեղեցու վիճակային դպրոցը: Ա. Ղլտճյանը պատճառաբանելով, որ «տեղական փոխանորդական եւ հոգեւոր կառավարութեան գործերն այրուած են», չի հայտնում, թե որ թվականից է այս դպրոցը դարձել հոգեւոր կամ վիճակային: Մ. Սանթրոսյանի ուսումնասիրությունները, սակայն, հանգեցնում են այն համոզմանը, որ «լիապէս եկեղեցական իշխանութիւնների տնօրինութեան տակ գտնուող ու եկեղեցական միջոցներով պահուող «հոգեւոր» դպրոց ստեղծուում է 1852–1853 թթ.» (*Ա. Ղլտճեան,* Պատմութիւն Ալեքսանդրապօլի հայոց հոգեւոր վիճակային դպրոցի (1840–1912), Ալեքսանդրապօլ, 1912, էջ 16): Ա. Ղլտճյանը վիճակային դպրոցի պատմությունը բաժանում է մի քանի շրջանի: Ենթադրում ենք, որ հոգեւոր դպրոցի ուսուցիչները մեծավ մասամբ պետք է հոգեւորականներ լինեին: Սակայն հոգեւորականներից բացի՝ վիճակային դպրոցում դասավանդում էին ժամանակի ուսյալ աշխարհիկները, որոնցից մեծ հարգանք էր վայելում Մկրտիչ Արաբաջյանը, որի գործունեության շրջանում դպրոցում զգալի առաջընթաց էր նկատվում:

Այս վիճակային դպրոցը գոյության ընթացքում չի օգտվում Ս. Աստվածածին եկեղեցու հանգանակած միջոցներից: Ըստ այսմ՝ ենթադրում ենք, որ այն ունեցել է սկզբնական աղբյուրներ՝ քաղաքացիների նյութական օգնություն ու տարաբնույթ նվիրատվություններ: 1868 թ. սկսվում է դպրոցի ծաղկման շրջանը. «....փոխուում է դասարանական հին սիստեմը, աշակերտները բաժանուում են ըստ գիտութեան եւ հասակի, եւ ամեն դասարան ստանում է մի ամբողջական պատկեր.... դուրս է ձգուում հին ժամանակուայ գիտութեան գլուխ գործոցը՝ ճարտասանութիւնը» (*Ա. Ղլտճեան,* նշվ. աշխ., էջ 43): Ծաղկման շրջանում ներմուծվում է աշակերտներից ուսման վճար գանձելու կարգը, սակայն պահպանված տեղեկությունների համաձայն՝ սաների 1/5-ը կրթության վարձ չի վճարել: Այս պայմաններում դպրոցը շարունակում էր իր «առաքելությունը» եւ 1881–1882 ուսումնական տարում ուներ 14 բաժին՝ նախատեսված 564 աշակերտի համար: Իսկ 1884–1885 ուսումնական տարում դպրոցն ուներ մոտ 850 աշակերտ: Սա մեծ թիվ էր. Ալեքսանդրապոլի դպրոցի պատմության ողջ ընթացքում աշակերտների թիվն այսքան չէր եղել: Սակայն ցարական Ռուսաստանի՝ հայկական կրթական համակարգին հարվածող քաղաքականության արդյունքում 1885 թ. մի շարք դպրոցների հետ փակվում է նաեւ այս դպրոցը: Իսկ 1886 թ. վերաբացվում է որպես ծխական դպրոց՝ երկդասյան համակարգով. այն արդեն 1888 թ. ուներ երեք պատրաստական խումբ եւ երկու դասարան, որոնցում սովորում էր 367 աշակերտ: 1894–1895 ուսումնական տարում աշակերտների թիվը 387 էր, որը զգալիորեն չէր տարբերվում աշակերտների՝ 1888-ի թվաքանակից: Որպես ծխական երկդասյան դպրոց՝ այն գոյություն է ունեցել մինչեւ 1896 թ. (տես *Ս. Խուդոյան,* նշվ. աշխ., էջ 18):

Կրթական համակարգն առաջընթաց գրանցեց նաեւ Վրացահիմերեթական նահանգում: Արեւմտահայերի ներգաղթից հետո տնտեսական վիճակը հետզհետե կայունանում էր, ինչի հետ միաժամանակ աշխուժացում էր նկատվում նաեւ կրթամշակութային կյանքում: ԺԹ դարավերջին գործունեություն ծավալեցին Դերենիկ Դեմիրճյանը, Վարդան Շահպարոնյանը, ազգագրագետ Երվանդ Լալայանը, հրապարակախոս Պողոս Աբելյանը եւ այլք: Մշակութային առաջընթացը բարերար ազդեցություն ունեցավ առաջին հերթին դպրոցական կյանքի համակարգման եւ հետագա զարգացման վրա: Վրացահիմերեթական նահանգում գործող հոգեւոր դպրոցների շարքում աչքի էր զարնում Ախալցխայի Կարապետյան դպրոցը (արական միջնակարգ): Ըստ Մ. Սանթրոսյանի՝ դպրոցը հիմնադրվել է 1830 թվականին, իսկ այլ փաստաթղթերում նշված են նաեւ 1838 եւ 1848 թվականները: Ա. Մելքոնյանն Ախալցխայի եւ Ախալքալաքի դպրոցների պատմությունը շարադրելիս գրում է. «1830-ական թթ. սկզբներին Կարապետ արքեպիսկոպոսի նախաձեռնությամբ բացվեցին ծխական դպրոցներ, Ախալցխայում՝ Կարապետյան (1830 թ.), Ախալքալաքում՝ Մեսրոպյան (1836 թ.) արական վարժարանները» (*Ա. Մելքոնյան,* Նյութեր Ախալցխայի եւ Ախալքալաքի դպրոցների պատմությունից, Երեւան, 2005, էջ 61): Դպրոցը 1873 թ. ունեցել է շուրջ 150 աշակերտ եւ 7 ուսուցիչ: Ա. Մելքոնյանը նշում է նաեւ, որ ուսուցիչները եկել էին Էրզրումից. նրանցից ոմանք մանկավարժական փորձ էին ձեռք բերել Էրզրումի նախկին Կարապետյան վարժարանում: Կարապետյան դպրոցը հայկական դպրոցների համատարած փակումից առաջ (1885 թ.)՝ 1884 թվականին, ունեցել է երեքդասարանյան կազմ եւ հավասարվել է ժամանակի միջնակարգ դպրոցներին: Ս. Խուդոյանը նշում է, որ դպրոցը վերաբացվել է 1886 թ. եւ ունեցել է երկդասարանյան համակարգ: Դպրոցում ավանդվել են հայոց եւ ռուսաց լեզուներ, կրոնագիտություն, գեղագրություն, երգեցողություն եւ ձայնագրություն (*Ս. Խուդոյան,* նշվ. աշխ., էջ 504): Ս. Խուդոյանն ու Ա. Մելքոնյանն այս առարկաների դասաժամերի քանակի վերաբերյալ մեզ տեղեկություններ չեն փոխանցում:

Գոյությունը հազիվ պահող դպրոցի առջեւ ծառացած խնդիրները լուծվում էին եկեղեցական դրամական սուղ միջոցների հաշվին: Վ. Երկանյանը գրում է, որ ԺԹ դարի 60-ական թվականների վերջերին դպրոցում ուսանող աշակերտների թիվը տատանվում էր 100–400 միջեւ, ըստ այսմ՝ ենթադրում ենք, որ դպրոցական կյանքը բարելավվել էր: Հաճախ եկեղեցական դրամական միջոցները, որոնք հատկացվում էին դպրոցին, վատնվում եւ իրենց նպատակին չէին ծառայում. այս առնչությամբ հատկանշական են Ախալցխայի բնակչության՝ Գեւորգ Դ Կոստանդնուպոլսեցի հայրապետին (1866–1882 թթ.) ուղղած նամակ-խնդրագրի հետեւյալ տողերը. «Քանզի, Վեհափառ Տէր, յանպայման եւ ի տարապարտ իմն չափու ծախքն դրամքն այնոքիկ, որոց գումարն հասանէ առ այժմ աւելի քան զ11.500 ռուպլի, իսկ արդիւնք իրացն համեմատաբար այնքան մեծագումար ծախուց ոչինչ են եւ ոչինչ երեւին» (*Ա. Մելքոնյան,* նշվ. աշխ., էջ 117):

Այսպիսով՝ վիճակային դպրոցներն առանձնակի դեր ունեին ուսումնակրթական կյանքը կազմակերպելու գործում: Այս դպրոցները նպաստում էին հոգեւոր կրթության զարգացմանը, ինչը սույն ժամանակահատվածում ուղղակի եւ անուղղակի իմաստով անհրաժեշտություն էր:

Շարունակելի

Զաքարա սրկ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
Անահիտ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Բաբելոնյան աշտարակը

Բաբելոնյան աշտարակի հնագույն պատկերը, ավելի ճիշտ՝ աստվածաշնչյան կառույցի իրական նախօրինակը հայտնաբերվել է Նոր-բաբելոնյան թագավորության սյունաբեկորներից մեկի վրա. այն երկար ժամանակ պահվել է մասնավոր հավաքածուում:

Գիտնականների՝ տարբեր ազգերի ներկայացուցիչներից կազմված խումբը հնագույն սեպագիր բնագրերի մեծ մասի թարգմանությունը կատարել է նորվեգացի գործարար Մարտին Շոյենի եզակի հավաքածուից (Schøyen Collection): Այդ հավաքածուն ներառում է տասնյակ հազարավոր ձեռագրեր, որոնք ընդգրկում են մի վիթխարի ժամանակահատված՝ առավել քան հինգ հազար տարի: Հավաքածուում ընդգրկված են Մեռյալ ծովի որոշ ձեռագրեր, բուդդայական հնագույն փաստաթղթեր եւ վավերագրեր, որոնք մեզ են հասել Ավստրալիայի բնիկներից: Մեծ թվով սեպագիր արձանագրություններ եւ քարե սալիկներ են հասել նաեւ Հին Միջագետքից:

Հնագետների եւ լեզվաբանների վերոհիշյալ խմբի կատարած նորագույն հետազոտության արդյունքներն ամփոփվել են 6 «Թագավորական սեպագիր արձանագրություններ եւ դրանց առնչվող բնագրեր Շոյենի հավաքածուում» (Cuneiform Royal inscriptions and related texts in the Schøyen collection) գրքում: ➥ *էջ 8*



ԴՄԻՏՐԻ ԼԻԽԱՉՈՎ

ՆԱՄԱԿՆԵՐ ԲԱՐՈՒ ՄԱՍԻՆ

Սկիզբը՝ 2022-ի թիվ 19 – 2023-ի թիվ 10

Նամակ երեսունվեցերորդ
ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐԻ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ [Բ մաս]

Բուլղարիայում բնության եւ մարդու փոխհարաբերությունների բնույթում առկա է մեկ զարմանալի գիծ՝ փոխադարձության, փոխադարձ բաց լինելու հատկանիշը: Այս հատկանիշը դեռեւս թույլ է արտահայտված Բուլղարիայի առաջին մայրաքաղաք Պլիսկայում: Պլիսկա քաղաքի անվան հիմքում ընկած է նույն արմատը, որը Ռուսաստանի հնագույն քաղաքներից մեկի՝ Պսկովի անվան հիմքում է (հնում այդ «Պլեսկովը» Պլիսկայի անվանական «եղբայրն էր»): Երկու քաղաքներն էլ տեղակայված են հարթ, տափակ տեղանքում, որից եւ ստացել են իրենց անունները: Պլիսկայի հոյակապ ապարանքի, դրա պատերի, Պլիսկայի ճանապարհների ու սալարկուղու մնացորդներում ընկած են մեծ քարասալեր: Իրենց վիթխարակերտությամբ, ծանրությամբ այդ քարե սալերն ասես հաստատում են շրջակա տարածքի հզոր հորիզոնագծերը:

Քոչվոր նախաբուլղարները, քոչվորական ապրելակերպից անցնելով նստակյացի, դեռեւս չէին կարող բաժանվել հարթ տափաստաններից, որտեղ հարմար էր արածեցնել ձիերն ու անասունները, այդ պատճառով իրենց առաջին մայրաքաղաքը հիմնեցին ոչ թե հեշտ պաշտպանվող լեռներում, այլ արոտավայրերում: Որպեսզի ամրապնդեն իրենց նոր՝ նստակյաց ապրելակերպը, նրանք իրենց առաջին քաղաքը կառուցեցին կարծր քարի հսկայական սալերից՝ դրանով իսկ հավիտյանս հավիտենից ընդգծելով իրենց անհրաժեշտ անշարժությունը, իրենց նոր կապվածությունը հողին: Բուլղարիայի երկրորդ մայրաքաղաքը՝

Պրեսլավը, տեղակայված է այլ կերպ՝ շրջապատող լեռների հսկայական գավաթի մեջ: Գավաթաձեւ հովտի կենտրոնում հռչակավոր Կլոր եկեղեցին է: Շրջապատող լեռները զմայլվում են Պրեսլավով, նրա կենտրոնով՝ Կլոր եկեղեցիով, իսկ Պրեսլավը զմայլվում է իրեն շրջապատող անտառապատ լեռների հզոր պարսպով:

Բնության եւ մարդու այս փոխադարձությունն էլ ավելի յուրահատուկ եւ ուժեղ է Բուլղարիայի երրորդ մայրաքաղաքում՝ Վելիկո Տիռնովոյում: Վելիկո Տիռնովոն՝ իր հիմնական շրջաններով, ընկած է բարձր բլուրների վրա, որոնցից երկու ամենակարեւորներն են Ցարեւեցը՝ անառիկ ամրոցով, եւ Տրապեզիցան՝ բազմաթիվ եկեղեցիներով ու վանքերով: Իսկ բլուրների միջեւ բարդ գալարներով հոսում է Յանտրա գետը՝ իր ջրերում արտացոլելով քաղաքի դողդողացող գեղեցկությունը: Լեռների, քաղաքի եւ գետի այդ ողջ բարդ փոխհարաբերությունների վրա խոյանում են էլ ավելի բարձր լեռներ: Դրանցից մեկը տիռնովցիներն անվանել են Սոմինայի՝ Աղջկա ամրոց. ամրոց, որը կարող էին պաշտպանել եւ աղջիկները, այնքան ինքնին անառիկ էր այն: Լեռը կարծես քաղաքն է, քաղաքը կարծես լեռներն են... Լեռներն ու քաղաքներն անզանազանելիության աստիճանի միաձուլված են, կարծես ապրում են միասին:

Բուլղարիայի նույնիսկ համեմատաբար նոր՝ «վերածնունդային» քաղաքներն այդպիսին են: Դրանցից մեկը Կոպրիվշտիցան է:

Կոպրիվշտիցան «առաջին թնդանոթի» քաղաքն է: Այստեղ է սկսվել օսմանյան դարավոր լծի դեմ ազատագրական ապստամբությունը: Այս ապստամբությանն աջակցել է հենց ինքը բնությունը՝ Կոպրիվշտիցան շրջապատող լեռներով ու մթին անտառներով: Եվ տեսեք՝ ինչպիսի միության մեջ են այստեղ ապրում քաղաքը, անտառը եւ լեռները մինչեւ այժմ: Քաղաքի կենտրոնում՝ երկհարկանի տիպիկ բուլղարական տների միջեւ, ապրում են մուգ, հզոր, անսովոր բարձրահասակ անտառային եղեւնիներ: Այս անտառը մուտք է գործել քաղաք: Իսկ յուրաքանչյուր տնից տեսանելի են լեռնային մարգագետինները՝ ոչխարների հոտերով հանդերձ. տեսանելի է քաղաքը շրջապատող տեղանքը՝ հենց ամեն մի տնից (իհարկե հին, որովհետեւ ժամանակակից ճարտարապետները դա չեն հասկանում): Բանն այն է, որ բուլղարացիները հորինել են զարմանալի տներ: Հարկերն այդ տներում միմյանց նկատմամբ տեղակայված են ազատ, եւ երկրորդ՝ բնակելի հարկը միշտ այնպես է շրջված, որ նրա պատուհաններից բացվի փողոցի հեռապատկերը, եւ լինի քաղաքը շրջապատող բնության տեսարան. լեռնային վայրերում՝ դեպի լեռները, ծովափնյայում՝ դեպի ծովը: Գեղարվեստական բարձր իմաստով՝ տների, ցանկապատների եւ դարպասների վրա կրկնվում է սահուն գիծը՝ «զամբիկը» (անկտի), ասես բուլղարական լեռների ուրվագծերն ընդօրինակող:

Հավանաբար այն պատճառով, որ ԺԹ դարի բուլղարացի ամենանշանավոր ճարտարապետ Կոլյու Ֆիչետոն (1800–1881 թթ.) որեւէ տեղ չի ուսանել, նա այնքան յուրովի եւ այնքան ժողովրդական՝ բուլղարական ձեւով է ընկալել ճարտարապետությունը: Նրա համար ճարտարապետությունը բնության եւ մարդկանց կենցաղի շարունակությունն էր: Նրա կամուրջների կամարները ջրի մեջ իրենց արտացոլման հետ մեկտեղ ոչ միայն պատկերում են կատարյալ ձվածիրներ, ձվաձեւություններ, շրջաններ, այլ նաեւ զարմանալի սահունությամբ անցնում են կամրջի հենարանների կամարների մեջ, իսկ դրա այլ շինությունների սյուները ոչ այնքան իրենց վրա են «կրում» կամարները, որքան պարզ եւ բարյացակամ «պատկերում» են դրանք:

Որքա՜ն խաղաղություն, լռություն եւ հանգստություն կան աշխարհի ցանկացած ճարտարապետության մեջ ընդհանրապես, ժողովրդական ճարտարապետության մեջ որքա՜ն քիչ՝ այժմ նորաձեւ դարձած «կոպտապաշտություն» եւ քաղաքային հարձակվողականություն կան:

Անդրադառնանք մեր հարազատ Անդրկովկասի բնությանը:

Վրաստանում մարդը պաշտպանություն է փնտրում հզոր լեռների մոտ, երբեմն ձգվում է դեպ դրանք (Սվանեթիի աշտարակներում), երբեմն՝ դիմակայում լեռնային ուղղաձգությանն իր կացարանի հորիզոնականությամբ: Բայց ամենակարեւորն այն է, որ Վրաստանում բնությունն այնքան վիթխարի է, որ այլեւս մարդու հետ պարզ միության մեջ չէ. այն հզորապես հովանավորում է նրան, գրկում, դյուցազնական ոգի փչում նրա մեջ:



Վրաստանի մասին շատերն են գրել: Չեմ թվարկի ԺԹ դարի ռուս մեծ բանաստեղծներին եւ խորհրդային բանաստեղծներին, որոնք գրել են Վրաստանի, նրա բնության ու մարդկանց, սովորույթների ու պատմության, մշակույթի ու արվեստի մասին: Վրաստանը սիրել եւ սիրում են: Վրաստանում բնության եւ մարդու հարաբերությունները ներկայացնելու համար բերում եմ Ն. Զաբոլոցկու (1903–1958 թթ.) մի բանաստեղծությունը: Թող ընթերցողը չգանգատվի ինձնից, որ այս բանաստեղծությունն ամբողջությամբ եմ մեջբերում: Բանաստեղծություն կտրելը նույնն է, ինչ նկար կտրելը, իսկ Ն. Զաբոլոցկու բանաստեղծությունները վերընթերցելը միշտ էլ մեծ հաճույք է:

Գիշերը Փասանաուրիում

Գիշերը փայլում էր, փանդուռ նվագում,
Լուսինն իր սիրո ապաստանը լողում,
Եվ կրկին Փասանաուրիի այգիներում
Արագվիների ափին սոխակն էր երգում:

Խաչի լեռնանցքից իջնելով ես ցած,
Ուր դեռ մայիսին սառույց է ու ձյուն,
Չափազանց հոգնած՝ չուզեցի ոչինչ՝
Ո՛չ երգ, ո՛չ սոխակ, ո՛չ գեղեցկություն:

Եվ սոխակների դայլայլի ներքո
Առա լապտերը, լրիվ մերկացա,
Եվ գետն ինչպես մի խենթ կույս
Պինդ գրկեց մարմինն իմ հսկա:

Ես պառկել էի՝ քարերից կառչած,
Վրաս շողալով հոսանքն էր ոռնում,
Քարերը՝ շարժվում ասես մոլեգնած
Փնթփնթալով՝ ոտքերիս մոտ պարում:

Նայում էի ես հեռվում մարմրող,
Հանգչող կրակի դալկացող լույսին,
Եվ հովվաշունը մեծ՝ ափից եկող
Վսեմ քայլքով մոտենում էր գետին:

Ես ափ դուրս ելա ասես մի մարտիկ,
Սառը, անհողդողդ, մաքուր, երկրային,
Եվ շունը վսեմ՝ հանգիստ ինչպես դից,
Ճանաչելով ինձ փռվեց առջեւս իմ:

Եվ այդ գիշեր այգիներում Փասանաուրիի
Ճաշակելով սառնությունը կուսական ջրի՝
Սիրտս առա առաջին հնչյունները փանդուռի,
Ինչպես համբույրն անդրանիկ՝ պարման օրերի:

Վրաստանում բնությունն իսկապես հզորապես է ընդունում մարդուն եւ դարձնում նրան ուժեղ, վեհ ու ասպետական:

Հայաստանի բնությունից ստացած տպավորություններն ինձ ստիպում են փոքր-ինչ մանրամասն խոսել նրա բնատեսարանների մասին: Հայաստանի դարավոր մշակույթը հաղթել է նույնիսկ լեռներին: «Դարերի շուրջպար,– գրում է Անդրեյ Բելին (1880–1934 թթ.) «Քամին Կովկասից» գրքում,– հնությունները զոդված են հողին. եւ բնական քարերը մաշել են քանդակները. եւ արձանները՝ ճաքած, հողի մեջ մխրճված, բարձրացնում են թփերը. չես հասկանում, թե ինչ ես տեսնում. բնությո՞ւն է, թե՞ մշակույթ: Հեռվում Սեւանը բաժանող մերկ-վարդագույն, դեղնաճերմակավուն եւ ակնակուռ լեռնաշղթան է միջանցիկ երանգավորմամբ վեր հառնում Գեղարքունիքի վրա. հողն այնտեղ տաճարներով է դուրս մղված, տաճարներն ամբողջական ժայռաբեկորներ են»:

Չեմ կարող զսպել ինձ, որ չմեջբերեմ մի հատված այդ նույն գրքից, որտեղ Բելին նկարագրում է Հայաստանի մասին իր առաջին տպավորությունները՝ ստացած վաղ առավոտյան գնացքի պատուհանից. ➥ էջ 8

ԴՄԻՏՐԻ ԼԻԽԱՉՈՎ

ՆԱՄԱԿՆԵՐ ԲԱՐՈՒ ՄԱՍԻՆ

↩ էջ 7

«Հայաստան:

Կատարները պատառոտում են աղջամուղջը: Տարածությունը կազմված է կիրճերի մռայլ-կապույտ, գորշագույն, բաց փիրուզե երանգներից՝ մենավոր մի աստղիկ աղոտ լույսի տակ: Նոսրացող մշուշի մեջ կանաչ կա: Բայց քերծոտված գագաթն ահա դանակի նման իր կեռ սայրով չխկացրեց երկնակամարը, եւ սանրի նման կտրված՝ վեր մագլցեց հողը՝ ստորոտում կապույտ, վայրիորեն հոշոտված: Ասես քարահորձանուտներից ելնող դանակներ լինեն, որ հարվածում են երկնքի ուղիղ կենտրոնին: Կախված ժայռերի ահավոր ցրվածքի վրա բացված քերծոտված աշխարհ, որտեղ չկա մի գիծ, որ բռնված չլինի մոլեգնությամբ» (թարգմ.՝ Ռ. Ավագյանի):

Որ դա Բելիի վաղանցիկ տպավորությունը չէր, ցույց է տալիս այն փաստը, որ դրան արձագանքել է հենց ինքը՝ հայ գեղանկարչության հանճարը՝ Մարտիրոս Սարյանը, եւ ինչը կարող է լինել առավել հեղինակավոր, քան նկարչի նման արձագանքը: Սարյանը՝ «Հայաստան» ակնարկից ոգեշնչված, Բելիին ուղղված իր նամակում գրում է, որ ինքը պահում է այն օրերի հիշողությունները, երբ իրենք միասին «շրջագայում կամ անցուդարձ էին անում այդ խանձված ու մերկ լեռնային երկրում՝ հիանալով դիզված կապտամանուշակագույն քարերով՝ վեր խոյացած Արարատի եւ Արագածի բարձրաբերձ գագաթների տեսքով»:

Ես չեմ համարձակվում ուղղել Սարյանին, սակայն, այնուամենայնիվ, երբեմն ինձ թվում է, որ Արեւելյան Հայաստանի բնապատկերն ավելի խիստ է, քան Սարյանի կտավներում է այն պատկերված: Անանտառ լեռներ՝ ակոսված անձրեւներից, առուներից եւ խաղողի այգիների զոլերից, լեռներ, որոնցից քարեր էին ցած գլորվում, թանձր խիտ գույներ. սա բնությունն է՝ ասես ժողովրդի արյունը ներծծած: Վերեւում գրել եմ, որ գյուղացու ձեռքով մարդկայնացված ռուսական բնության համար բնորոշ է հերկած հողի, ցանկապատների ու գերանակապ պատերի կշռույթը: Կշռույթը բնորոշ է նաեւ Հայաստանի բնապատկերներին, սակայն Հայաստանում այն այլ է: Մեծ տպավորություն է թողնում Սարյանի «Հողը» (1969 թ.) կտավը: Այն ամբողջովին բաղկացած է զոլերից, սակայն վառ, ալիքաձեւ զոլերից. բոլորովին այլ, քան Ռուսաստանում մարդու ստեղծած կշռույթը:



Այդ նույն ալիքաձեւ կշռույթն է արտահայտված նաեւ հայ նշանավոր նկարիչ Մինաս Ավետիսյանի կտավներում: Նրա «Ծնողներ» (1962 թ.) կտավում հայրն ու մայրը պատկերված են հայկական բնատեսարանի հետնանկարին: Ապշեցուցիչ է, որ հայկական բնության կշռույթն ասես կրկնվում է մարդկանց հոգեկան կշռույթում: «Ծնողներ» կտավում անգամ լեռներն են դարձել աշխատանքային կշռույթի ալիքներ:

Հայաստանի աշխատանքային կշռույթները զարմանալիորեն բազմազան են, ինչպես որ բազմազան է նրա ժողովրդի աշխատանքը: Սարյանի «Կեսօրվա լռությունը» (1924 թ.) կտավում գետնին կարծես դրված են մշակված դաշտերի քառակուսիներ, ասես չորանալու համար բազմերանգ գորգեր փռված լինեն: Լեռների ու դաշտերի կշռույթները ներդաշնակում եւ հակադրվում են միմյանց:

Կոջոյանի «Արարատյան դաշտավայրը» (1957 թ.) կտավում կշռույթն ազատ է ու թեթեւ: Նրանում լեռներն ալիքներ են, դաշտավայրի զոլերը՝ թեթեւ ծովային ծփանք միայն:

Հայաստանի բնության հարստության մասին է վկայում նաեւ այն, որ գեղանկարչության մեջ այն զարմանալիորեն բազմազան ձեւերով է արտացոլված: Միեւնույն իսկ նկարիչը տարբեր ձեւերով է տեսնում այն: Եվ դրանով հանդերձ՝ մենք միշտ կասենք՝ դա Հայաստանն է:

Երկիր մուշկագույն հրդեհների ու
Մեռյալ դաշտերի կավագործական...
(«Հայաստան», թարգմ.՝ Հ. Բեյլերյանի)

Արդ, քանի որ Օ. Մանդելշտամի (1891–1938 թթ.) այս տողերը միտքս եկան, անկարելի է նաեւ չհիշել Վալերի Բրյուսովի (1873–1924 թթ.)՝ հայերին ուղղված բանաստեղծությունները.

Կանգնած եք դուք իրար ներհակ
Մեջտեղը երկու աշխարհների,
Եվ ասքերի խորքից անտակ
Կանչն եք լսում հին դարերի:

Անցել են ձեր երկրի սրտով
Հազար հողմեր մահահնչյուն,
Եվ Կյուրոսը՝ խուլ որոտով,
Եվ Ալեքսանդրը շառաչուն...

Որքա՜ն լավ է ցույց տալ ժողովրդի մեծությունը համաշխարհային իրադարձությունների առնչակցության մեջ: Հայ ժողովրդի ոգին այս տառապալից մասնակցության մեջ է, այլ ոչ թե քաղքենիական բարեկեցության:

Հանց նրբատաշ քարն ալմազի՝

Ամբողջ շողքերը պահեց վառ,
Եվ վարդի բույրը Շիրազի,
Եվ հոմերյան ցոլքը անմար...
(«Հայերին», թարգմ.՝ Ս. Տարոնցու)

Արարատի ստորոտին նույնիսկ աղքատ հովվի ցուպը նմանվում է արքայական մականի.

Քարոտ դաշտի մռայլ մուժում
Հոտն է ահա ծերուկ հովվի,
Որի երկար փայտը անշուք
Նմանվում է գայիսոնի...
(«Արարատի մոտ», թարգմ.՝ Ս. Տարոնցու)

Նույն այդ առումով է հայկական բնության մասին խոսում Նիկոլայ Տիխոնովը (1896–1979 թթ.).

Ժամանակի լինգով դաժան
Ջարդոտված լեռների գրկում
Շողշողում է Հայաստանը՝
Հեքիաթի խնձոր ոսկեգույն...
(«Հայաստան», թարգմ.՝ Հ. Գրիգորյանի)

Ոսկե խնձորը, այսինքն՝ արքայական նշանը՝ «տերությունը», եւ գավազանը ռուս բանաստեղծները հանձնել են բազմաչարչար եւ իր նշանակալիությամբ երջանիկ Հայաստանին: Մի՞թե սա արքայական նվեր չէ:

Ես ափսոսում եմ, որ քիչ եմ եղել մեր երկրի հանրապետություններում եւ չեմ կարող գրել դրանցից յուրաքանչյուրի մասին: Ամեն մեկն էլ ունի իր գեղեցկությունը, պարզապես պետք է տեսնել: Սակայն նույնիսկ բերված օրինակներից պարզ է դառնում հետեւյալը. երկրի բնապատկերը նույնքան ազգային մշակույթի տարր է, որքան մնացյալ ամեն ինչը: Հայրենի բնությունը չպահպանելը նույնն է, ինչ հայրենի մշակույթը չպահպանելը: Այն ժողովրդի հոգու արտահայտությունն է:

Շարունակելի

Ռուսերենից թարգմանությունը՝
Տ. Անդրեաս վրդ. ԵՂԵԿՅԱՆԻ

Բաբելոնյան աշտարակը

↩ էջ 6

Ուշագրավ է, որ այդ գրքում առաջին անգամ մանրամասն նկարագրվում է «Բաբելոնյան աշտարակի սյունը»: Լոնդոնի համալսարանի (University of London) պրոֆեսոր եւ այդ նորատիպ աշխատության խմբագիր Էնդրյու Ջորջը (Andrew George) գտածոն բնութագրել է որպես «աստղ գրքերի երկնակամարում»:

Թագավորի աջ ձեռքում կամ մի մագաղաթ է, որը պարունակում է աշտարակի վերակառուցման վերաբերյալ նախագծեր, կամ՝ մի գամաձեւ երկաթյա ձող: Արքայի դիմաց մի առասպելական շինություն է: Ինչպես ենթադրում են աշխատության հեղինակները՝ ելնելով Մարտին Շոյենի հավաքածուի պատկերներից, այդ գտնված սյունաբեկորը ժամանակին զարդարել է հենց զիկկուրատի (հինմիջագետքյան պաշտամունքային կառույց) պատերը:

Այդ սեւ քարի վրա դրոշմված արձանագրությունները թվագրվում են Ք. ծ. ա. 604–562 թվականներով: Քարաբեկորի վրա պատկերված են Նաբուքոդոնոսոր Բ թագավորը (անունը ներկայացնում ենք Աստվածաշնչի համաձայն), որը Բաբելոնը կառավարել է ավելի քան 2500 տարի առաջ, եւ Բաբելոնի առասպելական աշտարակը:

Առավել ճշգրիտ լինելու համար նշենք, որ մեր առջեւ, իհարկե, անմիջապես Բաբելոնյան աշտարակը չէ, այլ Էտեմենանկիի զիկկուրատը: Այս 91 մետրանոց շինությունը հնագետները համարում են աստվածաշնչյան աշտարակի նախօրինակը:

Բարձունքում տեղակայված վիթխարի յոթհարկանի տաճարային շինությունը դիտվում է կողքից, նաեւ տեսանելի է շինության ներքին կառույցների հատակագիծը:

Արձանագրությունները պարզորոշ ներկայացնում են աշտարակը՝ որպես «Բաբելոնի մեծ զիկկուրատ»: Քարաբեկորին պատկերվածի համաձայն՝ Նաբուքոդոնոսոր արքան ինքն է պատմում շինարարության մասին. «Ես այն կառուցեցի ի զարմանս աշխարհի մարդկանց, ես բարձրացրի այն դեպի երկինք, դռներ պատրաստեցի դարպասի համար, այն պատեցի ձյութով եւ աղյուսներով»:

Ի դեպ, ըստ Էնդրյու Ջորջի, թագավորի՝ քարաբեկորի վրա փորագրվածը Նաբուքոդոնոսոր Բ-ի ընդամենը չորրորդ հայտնի դիմանկարն է. մյուս երեքը գտնվում են բաց երկնքի տակ եւ այժմ այնքան էլ լավ վիճակում չեն:

Գլխավորն այն է, որ այս քարաբեկորը պահպանել է Նաբուքոդոնոսոր Բ-ի գահակալության ժամանակաշրջանին պատկանող առասպելական զիկկուրատի առաջին պատկերը: Հենց Նաբուքոդոնոսոր Բ-ի օրոք Էտեմենանկին, որն առավել վաղ էր կառուցվել, բայց հետո ավերվել եւ մի շարք վերակառուցումների էր ենթարկվել, մի վերջին անգամ էլ է վերակառուցվում՝ բավականին մեծ չափերի հասնելով այնպես, որ դառնում է Բաբելոնի ամենաբարձր շինությունը:

Քարի վրայի արձանագրությունները հուշում են նաեւ այն մասին, որ աստվածաշնչյան պատմության ծագումն առնչվում է տարբեր ժողովուրդների. նրա՛նց, ովքեր հավաքվել եւ որոշել էին դեպի երկինք հասնող աշտարակ կառուցել:

Սեպագրում ասվում է. «Ես կենտրոնացրել եմ [բոլոր] երկրները.... Ես կառուցել եմ իմ շինությունը ձյութով եւ [եփված աղյուսներով]: Ես ավարտեցի շինարարությունը՝ կառույցը դարձնելով նույնքան պայծառ, որքան [Արեւը]....» (թարգմ.՝ Էնդրյու Ջորջի. ի դեպ՝ Մարդուկը հին Միջագետքի աստվածն էր, որին եւ նվիրված էր Էտեմենանկին):

Պաշտամունքային այս շքեղ կառույցը (ինչպիսին էին միջագետքյան մյուս զիկկուրատները եւս) իրենց աչքերով տեսնում էին հրեաները, որոնք գերի էին վերցվել Նաբուքոդոնոսոր Բ-ի զորքերի կողմից Երուսաղեմի՝ Ք. ծ. ա. 586 թվականին գրավումից հետո: Հետեւաբար՝ լիովին հավանական է, որ Էտեմենանկիի կառուցման իրական պատմությունը կարող է հիմք եղած լինել աստվածաշնչյան պատումի համար:

Նյութը պատրաստեց
ԱՆՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆԸ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Արփինե Չանթիկյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝
qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
web կայք՝
krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստորագր. 17.08.2023 թ.
Տպաքանակը՝ 1265